



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԳԱՐԱՆՔ

# ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

## ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՈՅ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻԱՏ ԵՐԵՍՈՒՆԵԻՄԷԿԵՐՈՐԳ

8 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1871



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՄՄԻՆՔԻՆՏԵԱՆ

— 1871 —

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԼԱ.

8 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1871

ՆԱԽԱԳԱՀ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԲ

ԱՏԵՆԱՊԵՏ. — Ս. ԱՂԱԲԷԿԵԱՆ ԷՖ.

## ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

- 1° Վաւերացումն նորընտիր Երեսփոխանաց :
- 2° Տեղեկագիր Գաւառական հարստահարութեանց Յանձնաժողովոյ :
- 3° Ատենական կանոնագրութիւն :
- 4° Համարատուութիւն Ազգ. Վարչութեան :
- 5° Կեդրոնացումն եւ Ապակեղրոնացումն :
- 6° Վերաքննութիւն Սահմանադրութեան — Գլուխ Ա :
- 7° Բացակայ Երեսփոխանաց գրաւոր դիտողութիւններն ընդունելի պիտի ըլլա՞ն, թէ ոչ :
- 8° Ընտրութիւն Ազգ. Վարչութեան Կրօն. ժողովոյ :

Ատենը բանալու որոշեալ ժամն անցեր էր արդէն, եւ բաց 'ի Ատենագրոյ էֆ. էն ոչ ոք կ'երեւէր 'ի Գիւանն : Թէ եւ Բ. Ատենագետ Ս. Աղաբէկեան էֆ. ներկայ սակայն ժողովականաց կարգը կը գտնուէր :

Ատենագրոյ էֆ. Նախագահ Սրբազանին յիշեցուց ատենն բանալու համար Ատենագետի մը պէտքը, եւ հետեւապէս Նորին Բարձր Սրբազանութիւնը՝ ժողովոյն փափաքանաց համաձայն՝ հրաւիրեց զԱղաբէկեան էֆ. Ատենագետի պաշտօնը վարել : Աղաբէկեան էֆ. որ Երեսփոխանութեան պաշտօնէն պահ մը դադրեր վիճակաւ եւ վերընտրուեր էր ընդ հուպ, այս պարագան դիտել տալով յայտարարեց թէ՛ նոյն դադարման պատճառաւ ոչ եւս Ատենագետի պաշտօն ունի իւր վրան, եւ նորոգ ընտրութեան կարեւորութեան վրայ պնդեց, սակայն

Նախագահ Սրբազանին եւ ժողովոյ կրկնակի հրաւիրանաց վրայ յանձն առաւ վերջապէս առժամանակեայ կերպիւ Ատենագետի պաշտօնը կատարել, մինչ 'ի հաստատութիւն ատենական կանոնաց, եւ իւր աթոռն անցնելով ժամ 7 1/4 ին ատենը բացաւ 'ի ներկայութիւն 42 Երեսփոխանաց, որոց թիւն աւելնալով հետզհետէ 52 ի յանգեցաւ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թէ եւ Երեսփոխանութեանէ դադարեալ էր վիճակաւ, սակայն վերտալին 'ի նոյն պաշտօն կոչուեցայ : Սիրելի է ինձ այս պարտաւորութիւնը, զոր աւասիկ կուգամ կատարել եւ իմ պաշտօնակցացս վաստակոց մասնակցելի : Իսկ Ատենագետութեան պաշտօնս ըստ իմ կարծեաց վերջացած է զլիտովին՝ երեսփոխանութենէ վիճակաւ դադրած ատենս, ուստի՝ ինչպէս ատենը չը բացուած յայտնե-

ցի, զայն առժամանակեայ կերպով միայն կըր- նամ շարունակել ցվերահաստատութիւն աստե- նական կանոնագրին:

Այս առթիւ պարտ կը համարիմ նաեւ Օտեան էֆ. ի, ինչպէս յանձնարարութիւն ընդունած եմ իրմէ, քանի մ'անգամ ժողո- վոյ ներկայ չը գտնուելուն պատճառը յայտ- նել, զորս ոմանք չ'են կրցած հասկընալ: Նա ալ ինձ պէս զաղբած էր վիճակաւ, եւ մինչեւ այն ատեն յորում իւր տեղը դեռ ուրիշ երեսօխտան մը չ'էր ընտրուած՝ շարու- նակեց պաշտօնը, այլ 'ի հարկէ ընտրութենէն 'ի վեր ոչ իրբեւ անգամ եւ ոչ իրբեւ Ատենա- պետ Ընդհանուր ժողովոյ մէջ կրնայ բազմիլ, թէ եւ փափաքելի էր իրեն ներկայ գտնուիլ եւ մէկ քանի կարեւոր խնդիրներ լուսաւորելու համար իւրովսանն նպաստել:

Այս յայտարարութենէն ետեւ Ատենապետ էֆ. հիւանդութեան եւ ուղեւորութեան պատ- ճառաւ բացակայ գտնուելու հարկադրեալ ո- մանց երեսօխտանաց անունները կը յիշէ, եւ յայտնելով թէ ժողովոյն ներկայանալի զանա- զան գրութիւններ կան Դիւանին վրայ, այլ սակայն ժողովի իւր օրինական թիւը չունի որոշում տալու համար, ետքի կը թողու զանոնք, եւ նախընթաց Լ. նիստի ատենագրութեան խոր- բագրութեան վրայ ժողովոյն գիտողութիւնը կ'ուզէ, նոյնպէս անոր վաւերացումը մեծագոյն մասի ներկայութեան վերապահելով:

ՄԱՋԱԼՄԵԱՆ Յ. ԷՖ. — ԻՅ. նիստի ատենագ- րութեան վրայ մէկ գիտողութիւն մ'ունէի մի- այն, բայց ատենագրութեան տեսքը ձեռքս ուշ հասնելուն պատճառաւ՝ չը կրցի յայտնել, ուստի հիմայ կ'ուզեմ ուղղել զայն:

Նոյն ատենագրութեան յերևս 444. իմ խօս- քիս առաջարկութեան մասին մէջ . . . :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (ԸՊՉԷԼԷԼ) Լ. նիստի ա- տենագրութեան վրայ գիտողութիւն ունեցող կայ:

ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ. — Եթէ Մաղլըմեան էֆ. ի ը- նելիք գիտողութիւնը ժողովի ընդունելի դատէ, այն ատեն ըստ բացակայ երեսօխտանք իրա- լունք պիտի ստանան վաւերացեալ ատենագ- րութեանց վրայ 'ի վերջէ գիտողութիւն ընե- լու: Ըսել չեմ ուզեր որ ժողովը Մաղլըմեան էֆ. ի գիտողութիւնը պէտք չէ ընդունի, այլ կ'ուզեմ գիտել տալ ժողովոյն որ սկզբունքի

խնդիր մ'է այս եւ հարկ է որ իբր այն որոշում մ'ընդունի նախ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թէ սկզբունքի խնդիր մ'ըլ- լայ՝ թէ ոչ, զայն հիմայ յուղել ընդունան ժա- մանակ վատնել է: Ատենական կանոնագրին քննութեան մէջ ամեն այս տեսակ խնդիր կըր- նայ իւր լուծումը գտնել: Թէ եւ սա խիստըս- տոյգ է որ, երբ ժողովոյ մէկ անդամը բացա- կայ գտնուի եւ ժողովը վճիռ մը տուած լինի անոր բացակայութեան ատեն, բացակայ ժողո- վականը բողոքելու իրաւունք չը կրնար ունենալ:

Ուստի կրկին կը հրաւիրեմ որ, նախըն- թաց Լ. նիստի ատենագրութեան վրայ գիտո- ղութիւն ունեցող եթէ կայ, խօսի:

ՄԱՋԱԼՄԵԱՆ Յ. ԷՖ. — Լ. նիստի ատենագ- րութեան վրայ ալ գիտողութիւն ունիմ թէ եւ, սակայն ժամավաճառ չը լինելու համար զանց կ'առնեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Լ. նիստի ատենագրու- թեան վրայ կրնաք գիտողութիւն ընել:

ԱՐՇԱԿ Յ. ԷՖ. — Քաղ. ժողովոյն պակսելիք անդամոց տեղ նորերու ընտրութիւնը Սրբա- զան Պատրիարք Հօր յանձնելու մասին եղած առաջարկութեան համար՝ ատենագրութեան 461. երեսին առաջին սիւնակին մէջ ըսուած է, «այս առաջարկութիւնը բազմաթիւ կրկնողներ կ'ունենայ թէ եկեղեցական եւ թէ աշխար- հական դասէն»: Այս ստոյգ է, սակայն նոյն միջոցին, Իւթիւճեան Կ. էֆ. իր առժամանա- կեայ ֆոխտոտենապետ՝ Սրբազան Նախագահին ուղղելով խօսքն ըսաւ, «ժողովի որոշեց որ 2եր Սրբազնութիւնն 'ի հարկին կատարէ ընտ- րութիւնը, եւ Ընդհ. ժողովոյ հաւանութեան ներկայացընէ»: Ես ալ Իւթիւճեան էֆ. ի պա- տասխան հարցուցի թէ՛ «ո՞վ տուաւ այդ որո- շումը»: Եւ ասկէ ետքը խնդիրը քուէի գրուե- ցաւ: Սակայն ոչ Իւթիւճեան էֆ. ի խօսքն եւ ոչ իմ հարցումս կայ նշանակուած:

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Կրնայ Սրչակ էֆ. հարցում մ'ուղղած լինիլ ինձ, եւ ես ալ 'ի հարկէ պատասխանած եմ իրեն. կը խնդրեմ որ իմ պատասխանս ալ յայտնէ, յիշողութիւնս զարթուցանելու համար:

ԱՐՇԱԿ Յ. ԷՖ. — 2ը պատասխանեց ինձ Իւթիւ- ճեան էֆ.:

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Ժողովը նոյն առա- ջարկութեան վրայ քուէ կը խնդրէր, Դիւանն ալ իւր պարտաւորութիւնը կատարեց եւ առա- ջարկութիւնը քուէի դրաւ:

ԱՂԱԲԷԿԵԱՆ Մ. ԷՖ. — Նախընթաց նիստը չը վերջացաւ այլ զաղբեցաւ, եւ այսօրուան նիստն անոր շարունակութիւնն է: Ուստի օր- ուան կարգը պէտք էր անխօսիս մնար եւ խըն- դիրները նոյն կարգով վիճարանութեան գըր- ուէին. սակայն կը դիտեմ որ այդ կարգը չ'ըջուած է, որով խօսելու համար մեր ըրած պատրաստութեան չը յարմարիր:

Նախընթաց Լ. նիստի ատենագրութեան վրայ գիտողութիւնները վերջ կը գտնեն, սակայն դեռ եւս մեծագոյն մաս գոյացած չըլլալուն՝ Ատենապետ էֆ. անոր վաւերացումն առ կախ կը թողու. եւ կը յայտնէ թէ անմիջական ո- րոշում ենթադրող խնդիրներ չը պիտի կրնայ առժամայն ժողովոյ ներկայացնել, ինչպէս՝ Գոր- ծաղիք Յանձնաժողովոյ երեսօխտանական ընտ- րութեանց յայտագիրն, երեսօխտանի մը զրկած հը- րաժարագիրն եւ ուրիշ երեսօխտանի մը կող- մէ Դիւանին դէմ ուղղուած ամբաստանա- զիր մը. հետեւապէս կը արամադրուի Ատենա- պետ էֆ. ատենական կանոնագրութիւնը վի- ճարանութեան զննելու:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Թէ եւ ժողովոյ օրի- նական թիւը լրացած ալ չը լինի, ատենական սովորոյթ մ'եղած է որ, Դիւանը Գործաղիք Յանձնաժողովոյ կողմէ եկած երեսօխտանական նորոգ ընտրութեանց տեղեկագիրն եւ հրա- ժարագրեր՝ եթէ կան՝ կ'ընթեռնու ըստ կարգին, եւ յետոյ մեծագոյն մասի ներկայութեան ժո- ղովի անոնց վրայ իւր որոշումը կուտայ: Այս սովորութիւնը պէտք է պահել եւ զայն բառ- նալու հարկ մը չը կայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քանի որ որոշումը մեծա- գոյն մասի ներկայութեան վերապահելի է, տարակոյս չը կայ թէ 'ի վերջէ նորեկ ժողո- վականը՝ յորմէ քուէ պիտի խնդրուի՝ իրաւունք պիտի ունենայ գրութեանց ընթերցումը պա- հանջելու, որով յուճկէսս կրկնութիւն մը պիտի լինի:

ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ. — Բայց նոյնպէս եղաւ նաեւ նախընթաց նիստին Մէզպուրեան էֆ. ի հրա- ժարականի խնդրոյն համար:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եւ ի՞նչ օգուտ ունեցաւ որ նոյնպէս ընել կը պահանջուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ամենէն լուազոյն միջոցն է, քանի որ մեծագոյն մաս չը կայ, վիճարա- նութեան կարօտ խնդիրներ ձեռք առնուլ, ինչպէս է ատենական կանոնագրին խնդիրը. եւ

միւսներն՝ որոնք որոշում կենթադրեն քան վի- ճարանութիւն՝ ետքի թողուլ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Երեսօխտանական ընտ- րութեանց վաւերացման խնդրէն ետեւ՝ Գաւա- աական հարստահարութեանց Յանձնաժողովոյ տեղեկագիրը կը յաջորդէ օրուան կարգին մէջ, որոյ վրայ ժողովոյ տալիք որոշումը կրնայ յա- ջորդ նիստին թողուիլ, սակայն հարկ է որ նոյն տեղեկագիրը կարգացուի այսօր, ատենագրու- թեան մէջ անցնի, որպէս զի ժողովականք կանխաւ պատրաստուին զայն ուշադրութեան առնելու համար:

Կը խնդրեմ որ՝ օրուան կարգը փոփոխու- թիւն կրելով՝ այն կարեւոր տեղեկագրի ըն- թերցումն ետ չը մնայ:

Տ. ՀՄԱՅԵԱԿ ՎՐԴ. — Կը կրկնեմ. այդ տե- ղեկագիրը խիստ կարեւոր է:

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ժողովի երկար ժա- մանակէ հետէ Գաւառական հարստահարու- թեանց Յանձնաժողովոյ տեղեկագրին կ'սպասելք անձկանօք, եւ հիմայ՝ որ իւր սեղանին վրայ ելած է նոյն տեղեկագիրը՝ ժողովի անոր պա- րունակութեան վերահասու լինիլ կը փափա- քի, որ ատենագրութեան միջոցաւ հրատա- րակուելէ ետեւ՝ գիտողութեան առնու զայն: Իսկ ատենական կանոնագրութեան խնդիրն, որ գաւառական հարստահարութեանց խնդրոյն հետ բաղդատելով աւելի ծանր կարեւորութիւն չունի, կրնայ յաջորդ նիստին թողուիլ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ես պատրաստ եմ ժողո- վոյ կամքը յարգելու, եթէ ուղէ այժմէն լսել Գաւառական հարստահարութեանց քննութեան Յանձնաժողովոյ տեղեկագիրը. բայց միանգա- մայն գիտել կուտամ որ ատենական կանոնագ- րութիւնը միայն պիտի կրնայ ժողովոյ եւ Դիւ- անին մէջ կարգաւորութիւն մը հաստատել, մեր ընթացքը դժել եւ անտեղի գէպքերու վերջ դնել. ատենական կանոնագրութեան յա- պաղմանէն մինչեւ իսկ բողոքներ կը ծագին, ինչպէս նաեւ այս պահուս նոյն տեսակ բողո- քագիր մ'եկած է Դիւանին դէմ, զոր քիչ մ'ա- ռաջ միշեցի:

Չայս ըսելով Ատենապետ էֆ. ժողովոյ կամ- քը կը հարցընէ, եւ անոր հաւանութեան վրայ Գաւառական հարստահարութեանց քննութեան Յանձնաժողովոյ Ատենագիր Ս. Փափագեան էֆ. ի կուտայ խօսքը. հետեւապէս Փափագեան էֆ. Դիւանը կ'ենէ եւ հոնկէ 'ի լուր ժողովոյն կ'ըն- թեռնու. Յանձնաժողովոյ տեղեկագիրը, որ ա- հաւաստիկ:

# Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ԳԱԻԱՌԱԿԱՆ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԵԱՆՑ ՔՆՆՈՒԹԵԱՆ

## ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ

Ազգային լինդհանուր ժողովոյ իւր ժիւնիստին մէջ գաւառացի ազգայնոց վիճակը ուշադրութեան առնելով, անոնց կողմէն արտաբերուած պատկառելի ժողովոյ տեղեկագրելու համար ընտրեց Յանձնաժողովս:

Յանձնաժողովս որչափ որ կ'ըզգար իրեն յանձնուած պաշտաման ծանրութիւնը և անոր լիովին ժամանելու միջոցներուն պակասութիւնը, այսու ամենայնիւ չվհատեցաւ, և կարելի եղած ու առ ձեռն պատրաստ գտնուած միջոցներով ձեռնարկեց իւր պաշտօնը կատարելու 1870 դեկտեմբեր 14էն սկսեալ: Եւ ընդ ամէնը իր նիստի մէջ իւր կրկնակի պարտաւորութիւնը կատարելով, այսինքն գաւառացի ազգայնոց վիճակը բնական և արտաբերուած հաւաստի կը ներկայացնէ իւր Տեղեկագրելու ազգային լինդհանուր ժողովոյ:

մէջ տեսնելով որ գաւառացի ազգայնոց վիճակին վրայ ի մտոյ և ճիշդ տեղեկութիւն ունենալու համար նոյն իսկ գաւառացի իմեղու հարկը կայ, որոչեց հետեւեալ շրջաբերականն ուղղել առ ամենայն առաջնորդս:

### ՊԱՏՃԷՆ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԻՆ

Ազգային Երեսփոխանական լինդհանուր ժողովն իւր ժիւնիստին մէջ գաւառացի ազգայնոց վիճակը ուշադրութեան առած ըլլալով՝ յատուկ Յանձնաժողով մը կարգած է, որ Բարեխնամ կառավարութեան կամաց և օրինաց հակառակ պատահած հարստահարութեանց և անկարգութեանց ներքին և արտաքին պատճառները քննէ, դարմանը գտնէ, և մանրամասնաբար տեղեկագրէ առ Երեսփոխանական լինդհանուր ժողովն, որ ներկայացնէ Բիրան:

Յիշեալ Յանձնաժողովը քանի մը շաբաթէ ի վեր ձեռնարկած ըլլալով իւր պատճառներն, արժան դատեց որ բոլոր առաջնորդներէն յատուկ տեղեկագրիներ խնդրէ թէ՛

Ա. Ի՞նչ են իրենց վիճակի ժողովրդոց ցոնրը, հարստահարութիւնները, և անոնց որո՞նց անորոշելու (տուրքի, ասկէր պէտէլիյէի, ճանապարհի շինութեանց, քրտերու, պէյե-

## ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆ

ՔՆՆՈՒԹԻՒՆ ԳԱԻԱՌԱՑԻ

ԱՋԳԱՅՆՈՑ ՎԻՃԱԿԻՆ

Յանձնաժողովս իւր չորրորդ նիստին

րու, Միւլթիլիմներու, ծանր ծանր վաշխառուներու երեսէ, և այլ զանազան ցաւեր, որոնք ձեղի ծանօթ են):

Բ. Ի՞նչ տեսակ որո՞նց կրնայ մտածուիլ ասոնց առջեւն առնելու համար:

Երբ Երեսփոխանական ժողովը գաւառացի ազգայնոց վիճակին մեծ ուշադրութիւն մատուցած՝ հիմնաւոր դարմանի մը վրայ կը խորհի, դուք ալ որ հովիւ և տեսուչ էք գաւառիդ ժողովրդոց, պարտաւոր էք այդ մասին ի՞նչ որո՞ւմակցիլ և խնդրուած տեղեկութիւնները ձեր եղբայրութեան առանձինն կամ ձեռնհաս ազգայնոց ոմանց խորհրդակցութեամբը, հարկէ և մարման խմբագրել, լաւ ուշադիր ըլլալով որ ի՞նչ և ի՞նչ տեղեկութիւններ չ'ըլլան, այլ քննարկելու և կործանելու ինչ որո՞ւմ ստացուած:

Սոյն տեղեկագրերը որչափ կարելի է, շուտով պատրաստելու և ժամյառաջ առ մեզ հասցնելու հոգ ունենաք:

Մնամ ազօթարար

4 Յունիսար 1874

(Ստորագրողն Սըբուան Պարտիքի)

Նոյնպէս միւս կողմանէ Պատրիարքարանի արձանագրութեանց տուժարներուն դիմեց, գիտնալու համար թէ՛ 20 տարիէ ի վեր գաւառներէն ինչ տեսակ ցաւոց և դանդատանաց տեղեկագրեր եկած են ի Պատրիարքարան. և կեդր. վարչութիւնը ինչ միջոցներ գործածած է անոնց դարմանին համար:

Գաւառներէն իզմիր, Պրուսա, Աղթամար, Սերաստիա, Քէօթահեա, Մանճրլիս, Տիւրիկ և Բալու իրենց տեղեկագրերը չըրկեցին, միւս ամէնքն ալ զրկած ըլլալով Յանձնաժողովս զանոնք մի առ մի քննութեան և նկատողութեան առաւ. և ընդ-

1. Յանձնաժողովոյ տեղեկագրերը մինչեւ ցարդ ուշացած չէր ըլլար, եթէ գաւառներէն սպասուած տեղեկագրերը շուտով ձեռք բերուած ըլլային, եւ Պատրիարքարանի արձանագրութեանց հաւաքման գործը խիստ ծանր չըլլար:

հանրապէս հեռեւեալ գանդաւաններն ու ցաւերը գտաւ, չորս գլխաւոր դասակարգութեան բաժանեալ:

### Ա.

ԱՐՔՈՒՆԻ ՏՐՈՑ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԶԵՂՄՈՒՄՆԵՐ

1. Զինորդի մարտ. (տեղեկութիւն):

Ընդհանրապէս կը գանդատին որ ազգահամարի ճշգրտութիւն չըկայ, և մեռնող, դաղթող, բողոքողին անյայտ եղողներու տուրքն ալ մնացեալներէն պահանջելու ստիպում կ'ըլլայ: Այս պատճառաւ կը բռնափոխութեան կը դիմեն, որպէս զի պակասողներու փոխարէն իրենց վրայ բարդուած աւելորդ տուրքէն ազատելով, միայն իրենց անձնական տուրքը վճարեն:

Քանի մը գաւառներ դիտողութիւն կ'ընեն թէ ըստ որում իւրաքանչիւր արու մինչև անգամ նորածինն ալ շուրջ 275/4 զրշ տարեկան տուրք պիտի վճարէ (250/6 զեղլմամբ, որ շնորհուած է մանկանց և զառամելոց և այլն բաժնին համար,) բնականաբար ազատ դիւղացի մը 6-7 անչափահաս արուներու և իր զառամեալ կամ հաշմանդամ հօրը կամ եղբօրը անձնական պիտոյքը հոգալէ զատ՝ անոնց համար տուրք ալ վճարելու պիտի պարտաւորի:

Ուրիշներ կ'ընեն թէ՛ «Պաքայէները այնչափ դիզուած են, որ ոչ թէ ունեցածն իս, այլ զաւակներն իս ալ ծախենք, չպիտի կրնանք հատուցանել»:

2. Կառնածոց և վարձի վրայ որո՞ւմ (Ե՛լաւ և Թէ՛յէլիէ):

Քանի մը գաւառներ կը գանդատին թէ տակաւին այս նոր օրէնքը իրենց մէջ գործադրուած չէ, և պարտաւորուած են ըստ նախնական սովորութեան Սալեանէ և այլ արքունի տուրքեր վճարելու:

Իսկ այն գաւառները՝ որոնց մէջ դործադրուած են, ընդհանրապէս կը գանդատին որ կալուածոց և վաստակի վրայ դրուած տուրքերը արդարութեամբ եղած

չեն, կարծիքի վրայ հիմնուած են, և թէ՛ ոչ մահմէտականաց այս տուրքերը մահմէտականաց հետ բաղդատամբ ծանր ու ծանր են:

Գաւառէ մը հասած տեղեկագրի մը մէջ տասը կալուած նշանակուած են յաւանէ յանուանէ, որոնք Գաւառ տեղում 59090 զուրուշ արժէք ունին, և Թահրէ Եւրոպի հաշուով 527942 զուրուշ, և ըստ այսմ կալուածական տուրք կուտան:

Միւսերնոյն գանգաւանները կան թէ՛մէթ թիւ տրոյց վրայ:

Տեղեր կան, ուր հողագործներէ և իւրենց տան պիտոյքը արուեստող կանանցմէ անգամ թէ՛մէթ թիւ կը պահանջուի:

Վերջապէս տրոյց հաւաքման համար աղքատին անհրաժեշտ կահ կարասիքն ու գործիքը բռնի ծախելու, և զանոնք բանտարկելու խտուածիւններ ի գործ կը դրուին:

3. Գաւառի մասին (Իւրիւն):

Այս մասին գանգատները միաբերան կը հաստատեն թէ՛ եղած զեղծումները այն Պէյէրէն կամ կառավարութեան ժողովոյ այն անգամներէն են, որոնք օրինաց հակառակ չործելու համար՝ իրենք վարձակալութիւն (Իւրիւն) չեն ըներ, այլ իրենց տղոյքը կամ սպասաւորները կամ այլ ծանօթները:

Օրէնքին արգելքը բաւական է հասկըցընել թէ՛ երբ այսպիսի փախստեան ճանապարհ մը գտնուած է, ժողովուրդը ինչ ձեռքերու տակ կը մնայ. աղքատը անիրաւութեան մը համար պիտի բողոքէ զինքը հարստահարողին: Այս տեսակ Միւլթէղիմները գիտնան իսկ թէ՛ պիտի վնասին, չեն վախնար. զի վնասնին հանելու միջոցներն ունին, աղքատը կեղծքերով, և չափազանց գիներ գնելով անոնց բերքին վրայ:

Այսչափ ցորեն կամ բամբակ կուտայ այս արտը, այսչափ դրամ պիտի տաս կըսեն, (դրամ կ'առնեն և ոչ բերքին տեսակէն, և այն ալ պղինձ դրամ չեն առներ):

Եթէ բերքին տէրը դժկամակի տալ, Միւլթէղիմը ալ աւելի կը հակառակի, և բերքը երեսի վրայ կը թողու (զի մինչեւ տասանորդը չառնուի, բերքը իր շտեմարանը չբարձուի), որ կրնայ շատ վնասներու ենթակայ ըլլալ. ապա առջի ուղած տասանորդին կրկնապատիկը կը պահանջէ ու կ'առնէ:

Տան պիտոյից համար տան պարտիզի մէջ ցանուած բերքին վրայ ալ տասանորդը պահանջուի:

Եթէ բերքին տեսակէն տասանորդառնուի, նոյն իսկ բերքին տիրոջը բառնալ կուտան առնուած տասանորդը, և խեղճերը օրերով կ'ըսպասեն Պէյէրէն գուռը, որ բերքը չափուի ու վերցուի:

Կը գանգատին նաեւ թէ Միւլթէղիմները հնձոց ժամանակ չեն գար, շատ անգամ մինչեւ այն ատեն տասանորդը ծախուած չըլլալուն համար, կառավարութեան կողմէ ալ մէկը չգար, և այնպէս բերքը երեսի վրայ կը մնայ ու կը փտի. և հուսկ ուրեմն կուգան և այն վնասեալ ու փտեալ բերքերուն համար ողջի արժէքով դրամ կը պահանջեն:

Այս պարագային մէջ գեղապետաց օգնութեամբը աղքատն ամէն տեսակ տառապանաց կ'ենթարկուի, դատի կը քաշկըռուի, կը տրորուի, կը բանտարկուի: Միւլթէղիմներու հետ գաղտնի ընկեր եղող պաշտօնեայք անոնց շահուն միայն կը ծառայեն. և խեղճ հողագործը ճարահատեալ իր ունեցածը վրայ կուտայ, և տակաւին չիկըրնար Միւլթէղիմին ձեռքէն ազատիլ:

Չմրան մտ և երբեմն ի մէջ ձմրան Միւլթէղիմներուն ի գիւղօրէս ելնելէն խիստ վնասակար արգիւնքներ յառաջ կուգան: Գիւղացին պարտաւոր է ձրիարար կերակրել Միւլթէղիմն և անոր գործակալները, որչափ ժամանակ որ հիւր մնան իրենց գիւղը, անոնց հաւնեցնելու եղանակաւ. երբեմն ալ կը ծեծուին և երբեմն ալ կանանց պատիւը կ'արատաւորի:

Այս տարի քանի մը գաւառներու մէջ

հողագործաց եղանց լծերն ալ դրուեր և ի գլուխ մէկ լծոց երկու կոտ, այն է չորս իտր ցորեն առնուեր է տասանորդ և կարի խտուածիւն. քանզի անոնք որ ցորեն չունէին, բռնագատուեր են դրամով գնել քաղաքացիներէն և վճարել:

Եւրոպի կամ Եւրոպի հարկը ըսուած արգիլեալ տուրք մ'ալ կայ, որ բերքին 1/6ն է, երբեմն ալ աւելի. զոր հողագործը եթէ չտայ, Եւրոպի շատ վնասներ կը հասցընէ անոր:

Այս գանգատներն աւելի ծանր են այն գաւառաց մէջ, յորս Պէյ կամ Սղա կամ Բիւրա բռնաւորներ կան, և անոնք ալ կամ իշխանութեան մէջ են, և կամ իշխանութեան առջեւ ազդեցութիւն ունին:

4. Միւլթէղի մասին (Իւրիւն):

Կառավարութիւնը նոր օրէնք մը սահմանած է, որով գաւառագլուխ քաղաքաց մէջ սնտուկներ հաստատուած են ի նպատակ աղքատ հողագործաց, որուն մուտքը պիտի ըլլայ նոյն գաւառացիոց հողէն գոյացած բերքին լուծ գլուխ մէկ կոտ ցորեն, և այս սնտուկէն աղքատ հողագործաց նեղ վիճակին ուտելիք և սերմ պիտի տրուի, նոյնը կալի ժամանակ անկէ առնելու պայմանաւ: Երկու տարի է որ կը ժողովուի, կ'ըսէ գաւառներէն մէկը, և երբէք աղքատ հայ հողագործի մը նպատակ տրուած և չենք ալ գիտեր թէ ժողովուածները ուր են:

Այս բարեգործութեան անունով բրանութիւն ալ գործածուած կոյ, զի տեղ մը 40 անձինք մէկէն բանտարկուած են այս պատճառաւ:

5. Գաւառ:

Փոխառութիւնը մեծ պէտք մ'է մանաւանդ հողագործաց համար. առանց անոր՝ մշակութիւնը կրնայ դադարիլ, և հողագործին կեանքը փճանալ: Օրէնքը չը կրնար ներգործել ասոր, զի փոխատունազատ է, չտար:

Այս մասին գաւառացւոց գանգատը

մեծ է և ընդհանուր. և Յանձնաժողովս վերոգրեալ նկատողութեամբ չալիտի արձանագրէր զայս, եթէ փնտռելով չգտնէր թէ՛, վաշտ արքունի տրոյց և վարձակալաց նկատմամբ ասկէ առաջ տեղեկագրը լաւաներուն և ուրիշ տեսակ հարստահարութեանց մէկ հետեւանքն է, և ասոր ալ հետեւանքը գիւղացւոց իրենց ստացուածներէն անջատուելը, կամ տարիներով ի Պօլիս և այլուր գաղթականութիւնն է, և ասոր ալ հետեւանքը՝ բաղմադիմի տառապանքներ թէ՛ գաղթողաց և թէ՛ մինչ ցողաց, և անբարոյականութեան ազդիւր, ժողովրդեան նուաջում են. ևն:

Բ.

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԵՒԹԵԱՆ ԶԵՂԵՐՈՒՄՆԵՐ

Տեղ տեղ՝ մանաւանդ մայրաքաղաքէս հեռու և յարաբերութեան մասին դժուարութիւն ունեցող գաւառաց Միւլթէսարըքի, Գայիմաքամ և Միւսիք եղող անձանց շատերուն վրայ ծանր գանգատներ կան:

Հաքիմներն ու Միւլթիմները և յետին պաշտօնեաները, Զապթիէներն իսկ այս գանգատանաց ենթակայ են:

Այս կարգի գաւառաց մէջ մահմէտական ժողովրդեան և մինչև իսկ անոնց տըղայոց սպառնալեաց և վնասուց ալ ենթակայ են ոչ մահմէտական ժողովուրդք, մերթ մահուան երկիւղներ, մերթ նիւթական վնասներ, մերթ բարոյական ցոււեր կրելով. ոչ կնիկ մարդիկ կրնան դուրս ելնել, ոչ մանկունք ի դպրոց երթալ, ոչ յայտնի ուրախութիւն մ'ընել, կամ մեռել մը թաղել առանց անարգութիւն կրելոյ, վնասու կամ այլ խնդրոյ մը համար բողոքել չեն կարող, զի յետինն չար քան զառաջինն կ'ըլլայ ևն:

Ժողովուրդը կը գանգատի,

1. Թէ արքունական շինութեանց համար դրամ և մարդ կը պահանջուի. թէ

Չէր քէզներու և զօրաց փոխադրութեան համար ստակ կ'առնուի, թէ՛ ազգային և անհատական կողմաներ կան բռնի դըրաւեալ կամ պաշտօնատարաց սեպհականեալ, թէ՛ կարնոյ և կարսոյ բերպօրէից շինութեան համար հարիւրաւոր դործաւորներ կը տարուին 70-80-100 ժամերու հեռաւորութեամբ տեղերէ, օրական վըճարելու խոստմամբ, բայց չեն վճարուիր թէ՛ տեղ տեղ ալ այսպիսի արքունական շինութեանց անունով նոր տուրք կ'աւելցընեն. թէ՛ թնդանօթները փոխանակ աւանանց լծել և քաշել տալու՝ երբեմն մարդոց քաշել կ'ուտան:

2. Թէ՛ հաստատեալ օրինաց հակառակ 4 աւուր տեղ՝ 10-20 օր կը բանեցնեն աղքատները, և այս պարագայիս մէջ ստորին պաշտօնատարք դիւրութիւն ունին, աղքատէն ստակ կորզելու և շտուղը հեռաւոր տեղեր և աւելի օրեր աշխատցնելով պատճառով, թէ՛ այս առթիւ ջապթիկներուն տուներ մանել և եկեղեցիներ կոխելն ալ պատահած է, թէ՛ այս պատճառաւ շատեր շատ վնասներ տեսած են, օրերով և ամիսներով իրենց մըշակութիւնը երեսի վրայ թողելուն համար, մանաւանդ դործի ատենները. թէ՛ դաւառէն պանդխտողներն ալ ենթակայ են այս աշխատութեան, և անոնց տեղ ալ կամ մարդ կամ գրամ կը պահանջուի ընտանիքներէ:

3. Թէ՛ Չափանշանները գիւղերը հարկ ժողովելու կամ հրաման մը տանելու զացած ատեններն խիստ տմարդութեամբ կը վարուին, և գիւղացիները կեղեքելով իրենց համար ալ ստակ կը կորզեն խեղճերէն:

4. Թէ՛ վէճակներ օրէնքը դործարելու մասին զեղծմունքներ կ'ըլլան. թէ՛ անհնար է որ կառավարութիւնն կամ անոր մօտը գտնուող անձինք օրէնքը իրենց ի նպաստ չդործածեն: (Թէ՛ ֆրիք մէճիսին) Ընտրողական ժողովը, որ կը բաղ-

կանայ Միւթէսարքիէ, Հաքիմ էֆէնտիէ, Միւթիթիէ, Թահրիրաթ Միւտիթիէ և ոչմահմետական ժողովրդեան կրօնական դըրութիւններէ, այս մասին դիւրութիւններ ունի:

Շատ անկարգութեանց և հարստահարութեանց աղբիւր այդ ընտրութեանց անտեղութիւնն է: Տեղ տեղ ընտրուած են այնպիսի անձինք որ յանցանքով դատապարտուած կամ դատի ներքե են:

Ուրիշ ցաւ մ'ալ կայ. տեղ տեղ կը գանգատին թէ Հայ անգամներ չկան կառավարութեան ժողովոց մէջ. և ընդհանրապէս կը գանգատին որ առաջնութեան կարգ չպահուիր, մինչդեռ նախ Յոյնը ետքը Հայը պէտք է որ նստին: Այս վերջին միջոցը մեզմէ բաժնուող Հոսթիլիտիան և Բողոքական եղբարց ձեռքը որսորդութեան զէնք մը եղած է, և առմիկը տեսնելով ժողովին մէջ անոնց առաջնորդին կամ անգամին Հայոցմէ վեր նստիր, անոնց աղքեցութեան տէր ըլլալը կ'ենթադրէ, և ասկէ հաւատափոխութեան միտում կամ քաջալեր մը կ'ըստանայ:

5. Թէ՛ կանայք և անչափահաս մանկունք բռնի մահմետականութեան դարձնելու ջանքերն՝ որ մոլեռանդից ձեռք կ'ըլլան, շատ անգամ կառավարութեան անգամոց կողմէ կողմնակցութիւն կը գտնեն, և այս ալ բաւական աղէտ մ'եղած է ժողովրդեան:

6. Թէ՛ գաւառաց կառավարութեան պաշտօնեայք ըստ մեծի մասին քիչ քիչ փոփոխուց ներքե են. իրենց հրաժարին ու չհրաժարիլը, իրենց ապրուստն ու իշխանութիւնն անգամ անոնց ձեռքն ըլլալով. թէ՛ այս ծուղակը չըրանուող պաշտօնէին պաշտօնավարութիւնն ալ չերկարիլ:

Ս'լ ինքնին կրնայ մակարերուիլ երկրի մը ժողովրդեան վիճակը, երբ այս բնիկ տեղացիներէն Գայիմաքամ կամ այլ պաշտօնեայ մ'ունենայ:

7. Կը գանգատին նաեւ թէրէֆի մասին թէ՛,

Մէկը եթէ մեռնելու ըլլայ Գատիները կը փութան Թէրէքէի երթալ մեռնողին տունը, և ինչ որ գտնեն հոն, ուրիշին ապրանքն ալ եղած ըլլայ և ներկաներէն հաստատուի ալ մտիկ չընելով զամէնքը կը դրեն և ըստ այնմ խարճ կ'առնեն: Եթէ հանգուցեալը հաստատուն կերպիւ կտակ ըրած և մինչև Մէհքէմէի միջոցաւ վաւերացուցած ըլլայ, չընդունուիր, նորոգ վաւերացնել կ'ուզուի, որ բան մ'ալ աւելի առնուի:

Թէրէքէն սովորաբար անչափահաս զաւակ կամ խելագար ունեցող հանգուցելոց գոյից համար ի գործ դրուելէն զատ, օտար երկիր պանդխտող ալ եթէ ըլլայ նոյն ընտանեաց մէջ, դարձեալ Թէրէքէի պէտք կը նկատուի: Ասանկ վիճակ այսինքն պանդուխտ չունեցող ընտանիք ալ քիչ կան, և չունեցողն ալ ունեցող կ'ըլլայ. հետեւաբար թէքէն ընդհանրապէս ի գործ կը դրուի ամեն հանգուցելոց գոյից համար:

Գ.

ՈՉ-ՄԱՀՄԵՏԱԿԱՆԱՅ ՎԿԱՅՈՒԹԵԱՆ ՉԸՆԴՈՒՆՈՒԹԻԼԸ

Թէ՛ որ մահմետականաց և ոչ-մահմետականաց մէջ խտրութիւն պահող, ատելութիւն արծարծող և մահմետականաց ստորին կարգի ժողովրդեան ձեռք զէնք տուող դրութիւն մը կայ, այն ալ ոչ-մահմետականաց վկայութեան չբռնուիլն է:

Գիւղի մէջ, շուկայի մէջ, տան մէջ, ուր որ ըլլայ, ոչ-մահմետական մը կը ծեծուի, կը նախատուի և այլն. դատարանը պիտի երթան, ո՞վ պիտի վկայէ. տեսնող մահմետականք չեն երթար վկայելու, ոչ-մահմետականին վկայութիւնն ալ չբռնուիր. դատը ինքնին կը կորսուի:

Գատարանէն դուրս երբ յանցաւոր մահմետականը պարզերես կ'ենէ, ալ ինչ կ'ըլլայ ամբաստանողին վիճակը. կամ թէ աւանկ պարագայի մէջ ո՞ր ոչ-մահմետականը կը համարձակի դատ բանալ, մինչդեռ իր յանցաւոր ելնելուն և բանտարկութեան կամ տուգանաց ենթարկուելուն կանխաւապահով է:

Ուրիշ կերպ մը. մահմետական մը կըրնայ զրպարտել ոչ-մահմետական մը, և վըկաներու ուկնդրութեամբ զայն դատապարտել տալ:

Այս պատճառներուն համար շատ վընասներ, առեւանգութիւնք, մինչև իսկ սպանութիւնք ալ պատահած են, և յանցաւորն առանց պատժոյ թողուութիւն վայելած:

Ստացուածքի իրաւունքն ալ այս միջոցաւ երբեմն կը փճանայ, դժուարութիւն մը ծագած ատեն՝ մահմետական վըկաներու յենլով:

Քիւրտերը և ուրիշ հարստահարողք թէ՛ մահմետական և թէ՛ ոչ-մահմետական, այս միջոցէն ոյժ կ'առնեն և կը քաջալերուին:

Գողութիւնք ալ այս միջոցաւ կը յաճախեն:

Վերջապէս մեծ աղէտ մ'է ոչ-մահմետական ժողովրդեան իրենց վկայութեան չը բռնուիլը. մանաւանդ երբ առեւտրական և սնրագործական դատերն ալ Շէրիի յանձնուելով վկայութեան պէտք ծագի: Հայն ալ Հայու դէմ այս առիթէն օգուտներ քաղած է և կը քաղէ:

Գ.

ՄԱՍՆԱԻՈՐ ՀԱՐՍԱՀԱՐՈՒԹԻՒՆՔ

Այն հարստահարութիւնները՝ որոնց լուրը խիստ աղետալի կերպով հասած է ու կը հասնի մեր ականջին, բարեբաղդ ենք ըսելու թէ, ընդհանուր դաւառաց չեն պատկանիր, այլ քանի մը դաւառաց միայն էրդրումի և Տիարպէքիի վիլայէթներուն, որ մեծ մասամբ Գիւրաիսթան են. կամ թէ սանկ ըսենք, վան, Գիլի, Ղուղուլան, Գերճան, Բաղէշ, Մուշ, Չարսանճաք, Տիարպէքի, Սղերտ բողոքակ մը կը կազմեն:

Չասոնք հարստահարող անձինքը յականէ յանուանէ նշանակուած են, և անոնց արարքները տեղեկագրուած, այնպիսի եղելութիւններ կան՝ որ ընթերցողին սոսկում

կուտան, « եթէ մը հարցոյն, մը պարտաւորութիւնը ընդհանուր չէր ըլլար, կըսեն, պէտք ուրեքնաւ, ինչ որ յիշատակէն ինչո՞ք ազատէն անոնց յետէն » :

Խարբերդ, Երզնկա, Ակն, Բաբերդ, Եւրոպիա, Բաղրսեանդ գաւառներն ալ մասնաւոր գանգատներ ունին Պէյքերէ, Չէրքէզներէ, Քիւրսերէ և մահմէտական բնակչաց մղեւանդութենէ :

Յանձնաժողովս հարկ չհամարիր հոսյականէ յանուանէ նշանակել այս վերոյիշեալ գաւառաց մէջ բռնացող անձինքը, վասն զի նոյն իսկ բողոքողներն ալ չեն ուզեր ինչպէս ըրած են սովորաբար իրենց հրամանին չանսացողներուն, և մանաւանդ իրենց համար գանգատելու յանդգնողներուն : Աւստի միայն Բաբերսեան գաւառավարութեան մատուցանելի տեղեկագրին մէջ պէտք է դնել ասոնց անունները :

ԳՅԱՄԱՍԻԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎՈՐՁՈՒԹԵԱՆՅ ՎԻՃՅԻՐ

Մինչև ցարդ ըսուածներէն բնական է սա հարցումը թէ ինչ կ'ընեն ուրեմն գաւառական ազգային վարչութիւնները :

Այդ իշխանութեան ստուերը միայն կայ առաջնորդները չեն կրնար միջնորդել այդ տեսակ ցաւոց և եթէ միջնորդեն պատասխան կ'առնեն « դուք հողերու գործերու միայն կրնաք խառնուիլ, դուք սիլ էք որ Հիւպատսի պէս թագրիր կը մատուցանէք, ձեր տեղը եկեղեցին է, և պաշտօննիդ՝ կրօնքնիդ քարոզել, կառավարութեան գործերու մի խառնուիք, թող խնդիր ունեցողը ուղղակի մեզի գայ » :

Այս պատասխանը այն ատիճան ներգործութիւն ունեցած է Առաջնորդաց ումանց վրայ, որ եթէ Պատրիարքարանը ատոր նարը չգանէ, իրենց պաշտօնէն պիտի բաժնուին : զի անոգուտ է, կ'ըսեն, Առաջնորդութիւն վարելը, երբ պիտի չկրնանք մեր ժողովրդեան ցաւոց դարման խնդրել, և

անոնց իրաւունքը օրինաւորապէս պաշտպանել :

Ինչպէս Առաջնորդաց՝ նոյնպէս նաեւ ազգային տեղական ժողովոց ազգեցութիւնն ալ աննշան բան է, դրեթէ ոչինչ : տեղ տեղ Սահմանադրապէս կազմուած ժողովներ կան, անոնք ալ անզոր, զի Սահմանադրութիւնը բնաւ չէ ճանչցուած : Երբեմն ալ Ազգային վարչութիւնները ծագուած են ինքզինքը չդիտող և կառավարութեան օրինաց անհմուտ պաշտօնեաներէ :

Առաջնորդ մը կը գրէ. « Մենք ինչ որ կ'ընենք կառավարութեան քով, զանոնք շոյելով և բազմազերս խնդրանք կ'ընենք և ոչ ի պաշտօնէ : Ո՞ր է իրաւասութիւնն ինչ հաստատող հրովարտակը, առաջինը աւին մեր ձեռքէն, այժմեանին մէջ ալ բան մը չկայ » :

Առաջնորդաց կամ Գաւառական Ազգային վարչութեանց ապաւէն՝ միմիայն կ'Պօլսոյ Պատրիարքարանը մնացած է, ուր կ'ուղղեն իրենց խնդիրները, և Պատրիարքարանն ալ Բ. Գուռը թագրիր կը մատուցանէ :

Այս թագրիրներուն ազգեցութիւնն ինչպէս եղանակաւ տկարացած է, ինչպէս կը հաստատեն գաւառներէն եկած տեղեկագրերը : զի Բ. Գրան հրամանագիրը իսկ թիւամի եղանակաւ կերթայ Վալիին, անկէ ալ Միւթէսարըֆին և Գայիմադամին, ուր որ պատահեր է եղելութիւնը : և ի պատասխան տեղեկագրով մը կը գրուի, կամ գրուի կ'ըսուի ինչ է ինչ, կամ թէ որ ծանր իրողութիւն մ'է, ինչո՞ք ինչո՞ք կը գրուի ի Պօլիս : Դժբաղդաբար Հայն ալ կը ստէ զայն, կամ ուրիշ ինչ, ինչպէս կ'ընեն գաւառական իշխանութեանց մէջ գանուող զանազան, կամ երբեք ինչպէս կ'ընէ ժողովուրդը, վասն զի ո՞վ կրնայ իւր ստացուածքը, պատիւը, մինչև իսկ կեանքը վտանգի մէջ դնել, և կամ կ'ընեն ինչ որ չի ուրիշնորհիւ՝ որ բազմութիւն են գաւառաց մէջ և կամ ինչո՞ք ինչո՞ք խնդիրն այլայլելով և ժողովրդէն ալ կնիք առնելով :

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆՅ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Յանձնաժողովս Պատրիարքարանի Գիւանատան 20 տարուան ազգային ժողովոց արձանագրութիւնները, նոյնպէս առ Բ. Գուռն մատուցուած այն կարեւոր թագրիրները՝ որ գաւառացուց մէկ ցաւը կամ խնդիրը կը պարունակէին, աչքէ անցնելով և քննելով տեսաւ որ, ասոնց ամէնքն ալ կը հաստատեն ասկէ յառաջ պատմուած զեղծումները, հարստահարութիւնները ևն :

Ժողովոց արձանագրութեանց վրայ խօսելու պէտք չի տեսներ զի անոնց խիստ մեծ մասը գաւառացի ազգայնոց խնդիրները կը պարունակէ, և ուրիշ մեծ մաս մ'ալ մասնաւոր անձանց և կամ Պատրիարքարանի վիճակին վերաբերեալ խնդիրներ : Զանազան ժամանակներու մէջ մանաւանդ Սահմանադրութեան հաստատութենէն ետքը՝ այլ և այլ հանրական բարեկարգութեանց վրայ խորհուրդներ եղած են, բայց ապարդիւն մնացած, ինչպէս որտեղ չէր ինչպէս և որտեղ ոչինչ չէր ինչպէս և որտեղ ոչինչ չէր ինչպէս :

Իսկ առ Բ. Գուռն ունեցած միջնորդութեան մասին յաջողած է ընդհանրապէս այն խնդրոց մէջ, որ ուղղակի մերներքին գործոց կը վերաբերին, այսինքն կրօնական կերպարանք ունին : Իսկ գաւառացուց զանազան ցաւոց համար միջնորդութեան մասին յաջողած է հրամանագիրներ ստանալ, որոնց հին ոճն ու ձեւը պարտաւոր է երբեք, ազատել ժողովուրդը հարստահարողէ : Իսկ նոր ձեւը ինչպէս է :

Արդ՝ կ'անցնինք թուել թէ որչափ թագրիրներ մատուցուած են, և որ վիլայէթներու կամ անոնց ներքեւ պարունակեալ առաջնորդական վիճակաց համար, և ինչ տեսակ խնդրոց վրայ :

1. Էրզրումի վիլայէթ :

Էրզրումի վիլայէթը հետեւեալ առաջ

նորդական վիճակները կը պարունակէ, որոնց համար 1770 թէպիլ արդր 1775 սկիզբէն մինչև 1780 զիլհիճճէ Վաստուցուած թագրիրները հետեւեալ թուերովն են .

Մշոյ	համար 39	թագրիր
Քիլի	»	46
Երզնկայի	»	43
Բաղէշի	»	42
Գէրճանի	»	5
Պայաղխի	»	5
Վանի	»	20
Կարսի	»	6
Բաբերդի	»	8
Էրզրումի	»	40
Ալթամարայ	»	2
		436

2. Տիարպէքլի վիլայէթ :

1770 մուհարրէմ 1775 յ 1778 թէմէզան Վաստուցուած թագրիրք .

Չնքուշի	համար	6
Չմէկէզէկի	»	7
Խարբերդի	»	32
Արապկերի	»	44
Ակնայ	»	5
Տիարպէքլի	»	30
Պէհէնի	»	4
Չարսանճախի	»	40
Բալուի	»	44
Քէմախի	»	8
Մալաթիոյ	»	40
Սղերտի	»	49
Արզրնի	»	5
		438

3. Սըվազի վիլայէթ :

1770 թէպիլ էվլէլ 1775 յ 1778 թէմէպ Վաստուցուած թագրիրք .

Թօգատի	համար	9
Գարահիսարի	»	5

4. Իւրաքանչիւր առաջնորդական վիճակաց ներքեւ պարունակեալ այլ եւ այլ քաղաքաց եւ գիւղօրէից համար մատուցուած թագրիրները իր վիճակին անուանը ներքեւ առնուած են :



Ամասիոյ և Մարգուանի համար	20
Տիվրիկի	12
Սըվազի	35
Կիւրինի	2
	83

4. Հալէպի վիլայէթ .

1270 ընկալի ախրը 1275 ընկալի 1280 ընկալի մատուցուած թագրերը .

Մարաշի	համար	18
Անթիքեայի	»	2
Ուրֆայի	»	6
Հալէպի	»	4
Չէլիթունի	»	8
Սիսի	»	2
Այնթապի	»	3
Պէլէնի	»	1
		44

5. Ատանայի վիլայէթ .

1277 սէֆէր 1278 ընկալի 1282 ընկալի մատուցուած թագրերը .

Ատանայի	համար	14
Թարսուսի	»	3
Հաճընի	»	2
		19

6. Տրապիզոնի վիլայէթ .

1270 սէֆէր 1275 ընկալի 1281 սէֆէր 1. մատուցուած թագրերը .

Տրապիզոնի	համար	8
Ճանիկի	»	5
Սըղուինի	»	1
		14

7. Դամասկոսի վիլայէթ .

1277 ճէմազիլ ախրը 1278 ընկալի 1287 ընկալի ախրը 27 մատուցուած թագրերը .

Դամասկոսի	համար	2
-----------	-------	---

Ս. Երուսաղէմի համար 11  
13

8. Այտընի վիլայէթ .

1272 զիլհիճճէ 20ին զինուորական արքայ անարդար բաշխման մասին .  
Իզմիրի համար մատուցուած է 1 թագրեր :

9. Էնկիւրիի վիլայէթ .

1270 սէֆէր 2. էն ընկալի 1281 ընկալի մատուցուած թագրերը .

Եօզղատի	համար	2
Կեսարիոյ	»	13
Էնկիւրիի	»	6
		21

10. Պրուսայի վիլայէթ .

1277 մուհարրէմ օէն ընկալի 1282 զիլքատէ 12 մատուցուած թագրերը .

Պրուսայի	համար	12
Քէօթահեայի	»	8
Իզմիրի	»	9
Պալքէսէրի	»	9
		38

11. Քասթամոնիի վիլայէթ .

1277 սէֆէն 2. էն ընկալի 1277 զիլհիճճէ 2 երեք և աւելի անգամներ թագրեր գրուած է Պօլուի Տէվէրէկի քայքայեալ եկեղեցւոյն նորոգ շինութեան համար .

12. Բուսէլի կողմը .

1270 ընկալի ախրը 2. էն ընկալի 1281 զիլքատէ 29 մատուցուած թագրերը .

Վառնայի	համար	5
Թէքիրտաղի	»	2
Էաիրնէի	»	1
Քէօթէնճէի	»	1
		9

1. Ս. Երուսաղէմի համար մատուցուած թագրերները կը պարունակեն Ս. տեղեաց վերաբերեալ խնդիրներ, Լատինաց եւ Յունաց հետ ծագած, եւ քանի մ'ալ կալուածական խնդիրներ :

Այս թագրերներուն բովանդակ գումարն է 529 :

Գաւառացւոց գանդատները՝ ինչպէս վերը տեսնուեցան, չորս գլխաւոր մասերու բաժնուած էին, որոնցմէ մէկը «Նախնայ» էր, որմէ շատ մասը այժմ դուրս թողլով, վասն զի ատոր համար մասնաւոր թագրեր չկայ, այլ հարստահարութեան վերաբերեալ խնդրոց թագրերներուն մէջ յիշատակուած է, միւս երեք մասերուն և անոնց ներքեւ սլարունակեալ մէկ քանի խնդրոց տեսակին վրայ կարգու կը նշանակենք մատուցուած թագրերներուն թիւը . քանի մը մասնաւոր խնդրոց վրայ գրուածները յիշատակել զանց ընելով :

Ա.

ԱՐՔՈՒՆԻ ՏՐՈՅԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԶԵՂԾՄԱՆՑ ՄԱՍԻՆ

Էրզրումի	համար	8	թագրեր
Տիարպէքերի	»	22	
Սըվազի	»	16	
Հալէպի	»	11	
Ատանայի	»	5	
Տրապիզոնի	»	2	
Էնկիւրիի	»	2	
Պրուսայի	»	10	
		76	

Բ.

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԷԻՑ ԶԵՂԾՄԱՆՑ ՄԱՍԻՆ

Էրզրումի	համար	32
----------	-------	----

1. Արքունի տուրքը, Պէտէլիյէ, Էմլաք եւ Թէմէթթիւ 27 թուականին հաստատուած ըլլալով, անկէ ասդին մինչեւ 10 թուականն եղած թագրերներուն բովանդակութիւնն է այս գումարը :

Յիշեալ թուականէն յառաջ Սալեանէ, Խարաճ, Խալէնջ, եւ այլ անուններով տուրքեր կ'առնուէին, որոնց համար շատ թագրեր մատուցուած են, եւ անոնք ամբողջապէս հոս առնուած չեն :

Տիարպէքերի	համար	22
Սըվազի	»	24
Հալէպի	»	13
Ատանայի	»	7
Տրապիզոնի	»	4
Դամասկոսի	»	3
Էնկիւրիի	»	1
Պրուսայի	»	12
Բուսէլիի	»	2
		122

Կանայ + և անլիւրիս անլիւրիս քանի անգամներ ընելու մասին :

Էրզրումի	համար	2
Տիարպէքերի	»	13
Սըվազի	»	11
Տրապիզոնի	»	1
Էնկիւրիի	»	2
Պրուսայի	»	2
Բուսէլիի	»	1
		32

Հրովանդիսի և Բուրխանիսի պաշտպանութեան և Բուրխանիսի անոնց երեւելի նշաններն :

Էրզրումի	համար	5
Տիարպէքերի	»	13
Սըվազի	»	3
Հալէպի	»	7
Ատանայի	»	3
Էնկիւրիի	»	4
Պրուսայի	»	3
		38

Գ.

ՄԱՍՆԱԻՈՐ ՀԱՐՍԱՀԱՐՈՒԹԵԱՆՑ, ԱԻԱԶԱԿՈՒԹԵԱՆՑ, ԱՌԵԻԱՆԳՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՄԱՐԴԱՍՊԱՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ .

Էրզրումի	համար	65
Տիարպէքերի	»	79
Սըվազի	»	24
Հալէպի	»	9
Ատանայի	»	4
Տրապիզոնի	»	7

Գամասկոսի համար	1
Էնկիւրիի »	10
Պրուսայի »	10
Բուժելիի »	1
	210

Նիւնիւնիւնը քննարկելու և ինչպէս պիտի ընդհատուի զայն .

Էրզրումի համար	5
Տիարապէքիի »	12
Սըվազի »	2
Հալէպի »	2
Էնկիւրիի »	1
Պրուսայի »	1
Քասթամունիի »	3
	26

Նիւնիւնիւնը յարգելու և ինչպէս պիտի ընդհատուի զայն .

Էրզրումի համար	2
Տիարապէքիի »	2
Սըվազի »	3
Հալէպի »	1
Ստանայի »	1
Էնկիւրիի »	2
Պրուսայի »	1
Բուժելիի »	1
	13

Սակայն ազգային կեդրոնական վարչութիւնը ուրիշ թագրիւններ ալ ունի, որոնք այս կամ այն գաւառին չեն պատկանիր, այլ ընդհանուր գաւառացի և անոնց մէջ գործուած զեղծմանց վրայ ընդհանրապէս կը խօսին, այսինքն .

1°. Արքունի տրոյ բաշխման և հաւաքման վրայ .

2°. Ազգային վանքերէն և անոնց կառուածներէն արքունի տուրք չառնուելու վրայ .

3°. Կրօնափոխանձանց սեպհական տուրքը նոր դաւանած կրօնակիցներուն տուժարն անցընել տալու վրայ .

4°. Ինչպէս մահմէտական եղողները, նոյնպէս ուրիշ կրօնքներու դիմողներն ալ քննելու մասին օրէնքի մը հաստատութեան վրայ .

5°. Ուրիշ քրիստոնեաց ազգաց յարող և ամուսնացեալ Հայոց վերստին ամուսնութեամբը, անոնց արդէն ունեցած զաւակաց վիճակին դարմանին վրայ .

6°. Հռովմէական և Բողոքական որսորդաց վրայ .

7°. Ասիոյ զանազան կողմերը ի գործ դրուած հարստահարութեանց վրայ, 31 յօդուածէ բաղկացեալ տեղեկագրով մը .

8°. Բ. Գրան դանդառներուն վրայ թէ գաւառներէն սխալ տեղեկութիւններ կը հաղորդուին, անոնց վաւերականութեանը վրայ .

9°. Գաւառական կառավարութեանց տեղւոյն առաջնորդէն և տեղական ազգային ժողովոց անդամներէն բռնի կնիք առնելով, գոհունակութեան Մահզէր խըմբագրելուն վրայ .

10°. Գաւառաց առաջնորդաց և Հայ անդամոց արքունի ժողովոց մէջ ունեցած առաջնութեան կարգին վրայ .

Այս խնդրոց ոմանց վրայ թագրիւններ կրկնուած և երբեմն ալ երեք կնուած են .

## ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆ ԴԱՐՄԱՆ ԳԱԻՍՌԱՅԻ Ա. ՁԳԱՅՆՈՅ ՎԻՃԱԿԻՆ

Մինչև հաս պատմութեանը յայտնի կ'ազատուցանեն թէ գաւառաց մէջ գործուած զեղծմանց դէմ՝ Ազգային Պատրիարքարանը Բարեխնամ կառավարութեան պաշտպանութեանը դիմած է, և կառավարութիւնն ալ անոնց բարձման համար հրամանագրեր զրկած է տեղական իշխանութեանց .

Եսակայն՝ Յանձնաժողովոյս եկած 54 կտոր առաջնորդական ընդարձակ տեղեկագրերէն և Պատրիարքարանի արձանագրութեանց մէջ միեւնոյն զեղծմանց մասին հետզհետէ կրկնուած թագրիւններէն յայտնի կ'երեւի, թէ մինչև ցարդ Բ. Գրան հրամանագրերն ահա՛ ինչպէս եղած են գաւառացի ազգայնոց վիճակին բարւոքմանը . հետեւաբար Պատրիարքարանը ինչպէս որ ինչպէս ուրիշ եղանակի մը ձեռք զարնել կը պարտաւորի, և Բ. Գրան ալ ինչպէս որ ինչպէս ուրիշ եղանակի մը Պատրիարքարանը կամ որ նոյնն է ինչպէս հանուր ժողովոյ՝ իւր սովորականէն դուրս միջոցը ձեռք առաւ ահաւայտիկ, անուանեց Յանձնաժողովս, որ քննէ գաւառացւոց հանրային իրաւունքները, և հանրային որոշման մը վրայ իւր խորհրդածութիւնը բերէ .

Յանձնաժողովս ալ իւր քննութեանցը մէջ՝ այդ հանրային իրաւունքները և որոշմանը գործը խիստ զգալի կերպով տեսած ըլլալով, զայն կը հաստատէ, և կը նկատէ թէ Ազգային ժողովը իւր առ Օսմանեան կայսերական կառավարութիւնն ունեցած պարտաւորութիւնը և հաւատարմութիւնը հաստատելու փորձ մը կուտայ. որպէս զի բարձուն այն զեղծումները՝ որ կը գործուին գաւառաց մէջ հանրային օրէնք, և հանրային կառավարութեան սկզբունք, որ վերջ. Սուլթանին խաթիմ Հիւմայուններով նուիրագործեալ է .

Յանձնաժողովս հետեւելով այն բարձր

արտօնութեան, զոր իւրաքանչիւր հըպատակ ազգաց տուած է վերջ. Սուլթանը՝ Բարեկարգութեան խաթիմ Հիւմայունին միջոցաւ թէ, «ժամանակին բերմանցը և քաղաքակրթութեան արդեանցն ու գիտութեանց պահանջած բարեփոխումները իւրաքանչիւր հասարակութիւն խորհրդածութեամբ որոշէ ու Բ. Գրան ներկայացընէ » .

Եւ նկատելով թէ, Բարեխնամ կառավարութիւնը՝ մանաւանդ վերջին օրերս՝ երկրին ներքին վիճակը բնուէ և ըստ այնքան որ ինչպէս հոգ ունի .

Իբրև դարման՝ հետեւեալ քանի մ'առաջարկութիւնները կ'ընէ Ազգային ժողովի, և Ձեր իմաստուն քննութեանը կը յանձնէ .

### Ա.

ԱՐՔՈՒՆԻ ՏՐՈՑ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԶԵՂԾՄԱՆՑ ԳԻՄ ԳԱՐՄԱՆ

1°. Չիւրախանի որսորդական մարդային քննուոր տալ, Բարեկարգութեանց հրավարտակին համեմատ, Այսպիսի խնդիր մը մենք ինքնին հարկ է որ ներկայացնենք և ցուցնենք թէ մենք ալ պատուոյ և քաղաքացիութեան զգացումն ունինք, և Հայրենեաց ու Տէրութեան համար արիւն թափելէ չենք խորշիր մեր մահմէտական հայրենակցաց հետ .

Պատուաւոր մասին խնդրել՝ որ ասոնք չհարհուրեն, վասն զի Բարեխնամ կառավարութիւնն արդէն զինուորական տրոյ 14 զեղչած և շնորհած է մանկանց, զառամելոց և այլոց համար . Այս զեղչը փոխանակ թահրիբի թուականէն հաշուելու՝ իւր շնորհուած թուականէն կը հաշուեն, որով թահրիբի թուականէն մինչև զեղչի թուականը եղած Պաքայէները կը պահանջուին, որ ժողովրդեան անհնար եղած է վճարել .

2°. Ինչպէս և թիւերէն տրոյ համար նոր թահրիբ խնդրել, բայց ոչ գաղանի, այլ հարգելու և ապօրէն թահրիբին պատճառ

ուս. մնացած Պաղպայէներուն շնորհումը :

3. Ինչպէս համար խնդրել որ Տէրութիւնն ուղղակի ինք հաւաքէ : Միւթէղի մը միայն իւր հաշուոյն տարին՝ կարելի եղածին չափ աւելի տուրք գանձել կը նայի, և բնականաբար հողագործութեան աղագային հոգ չտանիր, որ կառավարութեան համար կենաց խնդիր է :

Յանձնաժողովս կը նկատէ թէ արքունի արոց նկատմամբ ժողովրդեան բրած գանգատները աւելի ծանր են Միւթէղիմներուն դէմ. և կրնանք ըսել թէ այս մասին ժողովուրդը եթէ 100 զուրուշ կը վճարէ, կէսը և թերեւս աւելի նուազը հազիւ կը մտնէ արքունի գանձը : Այս կեղեքումներով, հողագործութիւնը՝ որ երկրին կեանքը պիտի ըլլայ և անոր դիւրութեանցը և զարգացմանը համար մինչդեռ այլ եւ այլ միջոցներ կը պակսին, հողագործութիւնը նոյն խակ Միւթէղիմներուն ձեռք հոգեվարք եղած է. և կ'արժէ որ Բարեխնամ կառավարութեան մեծ ուշադրութիւնը հայցենք նիւթական այս մեծ խնդրոյն, այս մայր արուեստին վրայ, որ միակ արուեստ մնացած է արեւելցոցս, և բնութիւնն ալ զայն զարգացնելու միջոցներով օժտած է :

4. Մէն-Ֆէյ - Գիւն-Ֆէյ յի Կուր-Ֆէյն ալ արգի վիճակին մէջ օգտակար չեն կրնար ըլլալ. ընդհակառակն աւելի պիտի ծանրանան գիւղացւոց վրայ : Այս մասին ուրիշ հնարաւոր միջոցներէ զատ՝ կալուածոց վրայ փոխատուութեան սնտուկներ (բրէտի ֆոնսիէ) հաստատելու դրութիւնն ալ հարկաւոր կը նկատուի, որ մեծ դարման մը կրնայ ըլլալ ինչպէս ինչպէս գէտ :

Բ.

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԷՅՑ ԶԵՂԵՄԱՆՑ ԳԷՄ ԴԱՐՄԱՆ

1. Օրէնքի անտեղեակ, կամ տեղեակ ըլլալով հակառակ գործող պաշտօնէից

զեղծմանց դարման տանիլը միմիայն կայսերական կառավարութեան ձեռնհասութեանը կը պատկանի :

Ինչ որ ալ ըլլան ձեռք առնուած միջոցները, որչափ ալ խնամով ըլլան պաշտօնէից ընտրութիւնները, սակայն պէտք ունին իրենց վրայ հսկողութիւն (ֆօնթրօլ) մ'ունենալ, որպէս զի տեղացի ժողովրդեան ընդհանուր տգիտութենէն և օրինաց բնաւ անտեղեակ ըլլալէն, և կամ տեղացի բնիկ մեծատանց ազգեցութենէն օգուտ չը քաղեն : Եւ երբ գաւառական կառավարութիւններէ անկախ և լիազօր քրննիչներ զրկուին, որոնք ամեն կարգի մարդոց հետ բանակցելու և գաւառին իրական վիճակը քննելու կարող ըլլան, պաշտօնէից վիճակը անշուշտ մեծ փոփոխութիւն կը կրէ :

Սակայն նկատել պէտք է թէ, այս քննչութիւնն ինչպէս Գիւն-Ֆէյ պիտի ըլլայ վասն զի եթէ տեղական կառավարութեան կանխաւ ազգարարութեան վրայ ժողովուրդը ինչպէս իւր ցաւերն անկեղծութեամբ խօսելու. կամ թէ որ յանցաւոր պաշտօնեայն անմիջապէս դատուէ յէլ- և դատուէ հոգ չը տարուի, այն ատեն ժողովրդեան վիճակը առաջինէն աւելի վատթար կ'ըլլայ :

Յաւալի հետեւանքներ ունին նաեւ պաշտօնէից անակրնկալ փոփոխութիւնները, որոնք թէ նիւթական և թէ բարոյական ազգեցութիւն ունին ժողովրդեան վրայ ասանկ փոփոխութիւններ երբ իրաւացի գանգատի մը վրայ ըլլան, տարակոյս չկայ թէ օգտակար կ'ըլլան, բայց ոչ թէ տեղափոխութեամբ, այլ իսպառ պաշտօնէ զրկմամբ :

2. Թէ Գիւն-Ֆէյ որ հիմնապէս տեղացի բնիկ մեծատանց կը ծառայէ, այժմեան ընտրողութեան ձեւին մէջ բարեկարգութիւն մտցնելու պէտք կայ. այս մասին գաւառաց Առաջնորդաց ներկայութիւնն ինչպէս հարկաւոր է, նոյնպէս կարեւոր ըլլալու է մեր Ազգէն ներկայանալի ընտրելեաց՝ կանխաւ ազգային տեղական

Գ.

ՈՂՄԱՆՄԷՆՏԱԿԱՆՆԱՅ ՎԿԱՅՈՒԹԵԱՆ ԶԸՆԴՈՒՆՈՒԵԼՈՒՆ ԴԱՐՄԱՆ

Էպոււածական, առեւտրական և սնրագործական դատերուն ի հարկէ նիւթամատեաններուն մէջ տեսնուիլը և Շէրիի չը յանձնուիլը՝ բարեկարգութեան հաստատութեանը, հարստահարութեանց և շատ տեսակ զրկանաց բարձման ծառայելէ զատ հարկ ըլլայ ի Պօլիս բերել տալով :

Դ.

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԱՐՍՍԱՀԱՐՈՒԹԵԱՆՑ ԴԱՐՄԱՆ

1. Քիւրտերը և ուրիշ լեռնցի ցեղեր, որոնց վրայ աւելցան վերջին տարիներս Չէրքէզները, ոչ միայն Հայոց այլ և ուրիշ ազգաց ալ, և մանաւանդ կառավարութեան գանձուն ալ մեծապէս վնասակար են : Ասոնք զէնք կը կրեն, կառավարութեան ոչ տուրք կուտան, ոչ զինուոր, և ապստամբ են. մինչդեռ միւս ժողովուրդներն անզէն են և կառավարութեան տուրք և զինուոր կուտան, աւելի տուրք մ'ալ այդ ապստամբներուն տալու պարտաւորութեամբ :

Կառավարութեան կիսայ կամ քիւրտերուն և այլոց ձեռքէն զէնքն առնուլ, և կամ միւս ժողովրդոց ալ զէնք տալ, այն ատեն երկիրը այս աղէտէն կ'ազատի, վրանաբնակ գաղանները գիւղաբնակ մարդեր կ'ըլլան :

2. Այն մասնաւոր հարստահարիչները՝ որոնք յականէ յանուանէ պիտի յիշատակուին Բ. Դրան մատուցանելի տեղեկազրին մէջ, բառնալ իրենց տեղերէն և ի Բումէլի աքսորել. առանց այս միջոցը ձեռք առնելու՝ շատ դժուարին է նոյն տեղերու թշուառ ժողովուրդը ազատել անոնց ազգեցութենէն և անոնց ձեռք գերի մընալէն :

ժողովով վաւերացեալ ըլլալը. և առանց Առաջնորդի կնքոյն անընդունելի պէտք է համարուի Թէֆրիք Մէնչիսիին Մազպաթան :

3. Երբ գաւառէ մը եկած գանգատի մը համար՝ Պատրիարքարանի Թագրիբին վրայ իսթիլամ ըլլայ, և գանգատի ենթակայ տեղական կառավարութիւնը ինքզինքն արգարացնելու միջոցներ գործածէ, պէտք է գանգատող Առաջնորդական իշխանութեանէն քննել, կառավարութեան և Ազգին կողմէն լիազօր քննիչներ զրկելով, և եթէ հարկ ըլլայ ի Պօլիս բերել տալով :

Գիւն- և Գիւն-Ֆէյ այս երկուքը մեծ դարման են գաւառացւոց վիճակին :

4. Բ. Դանէն գացած հրամանագրոց գործադրութեան խնդիրն ուշադրութեան առնուլ, և վիլայէթի պաշտօնական լրագրաց միջոցաւ հրատարակել ի տեղեկութիւն ժողովրդեան : Տիւսթուրի թարգմանութիւնն ալ պիտոյք մ'է գաւառացւոց համար :

5. Շատ հարկաւոր է նաև օրէնքի մը հաստատութիւնը մահմէտականութեան դարձողներուն, մանաւանդ կնիկ մարդոց համար, գոնէ 3 օր իր ազգին յանձնելու մասին : Այսպէս նաև հարկաւոր է կրօնափոխ արանց իրենց զաւակացը Կիւն-Ֆէյ մը վճարելու մասին՝ օրէնքի մը հաստատութիւնը :

6. Չապթիէներուն բնիկ տեղացի ըլլալն ալ իր յոռի արդիւնքներն ունի. եթէ անոնց տեղ զինուորներ գործածուին, որոնք տեղափոխութեան ենթակայ են, աւելի օգտակար կ'ըլլան :

7. Տգէտ պաշտօնէից կողմէ Հոտիմէական և Բողոքական ազգայնոց նախապատուութիւն մը տալու միտումը բառնալ, և իւրաքանչիւր հպատակ ազգաց ըստ վաղեմի սովորութեան ունեցած Թէշրիֆաթի կարգը պահել :

3° Պարտկաստանի սահմանադրութենէն զուտ վրայ և ֆիւրախատանի զանազան կողմերը զօրանոցներ հաստատելու պէտք կայ :

ԳՍԻՍՈՒՍԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆՅ ՎԻՃԱԿԻՆ ԴԱՐՄԱՆ

1° Սահմանադրութիւնը անմիջապէս գործադրել տալ ընդհանուր գաւառաց մէջ :

2° Սահմանադրապէս կազմեալ գաւառական ազգային վարչութիւնները տեղական կառավարութեանց յարդել և անոնց միջնորդութիւնն ընդունել տալ :

3° Առաջնորդներ հասցնել, զի յաջողակները խիստ հազուադիւրս են :

4° Առաջնորդութիւնը քահանայական դասուն ալ վերածելու գրութիւնն ընդունիլ, այս կերպով ընտրելուց ցանկը ոչ միայն աւելի ընդարձակուած կ'ըլլայ, այլ և ազգային դործոց և վարչութեան հմուտ և բանիրուն անձինք՝ որոնք ամուրի կեանքէն խոյս կուտան, քահանայական աստիճանաւ այդ պաշտօնը կրնան ստանձնել : Ինչպէս որ տեղ տեղ արդէն քահանայ առաջնորդներ կան : Այսպիսի վիճակաց մէջ Եպիսկոպոսը պիտի ըլլայ միշտ, ինչպէս է արդէն, հոգեւոր դէտ, հովիւ և տեսուչ գաւառին :

5° Առաջնորդական վիճակաց բաժանման խնդիրը կարգադրել, արդի վիճակը խիստ աղաւաղեալ է, և շատ անպատեհ, մանաւանդ Վրայէթի դրութիւնն հաստատուելէն ի վեր :

6° Արքեպիսկոպոսարաններու մէջ ֆալու քեահեատութիւն և օրինաւոր դի-

ւան հաստատել, որոնք երբէք չեն աւտնուած գաւառաց մէջ :

7° Այս դարմաններուն քով կը յաւելու մք ուրիշ ամենահարկաւոր դարման մ'ալ որ ամենուս ծանօթ է, այն է Գործարարութեան քանակական հարկարարութիւնը :

Գաւառներէն եկած հանրագրերն ուշի ուշով քննողին՝ անհնար է որ առաջին մը տածութիւնն այս չըլլայ թէ՛ ազխատութիւնն է զլիսաւոր պատճառ ամենայն չարեաց :

Արդարեւ գաւառներ կան, ինչպէս են ֆիւրախատանի սահմանները, որ իրենց կենաց, ընչից և պատուոյ անսպասով վիճակին մէջ ինչպէս պիտի կրնան այս կենսասնորդ միջոցին դիմել :

Թերեւս այն կողմերը աղատ ըլլան այն պատասխանատուութենէն, որ ունին մընացեալ ամենայն գաւառայինք : Սակայն Յանձնաժողովս կը նկատէ թէ նոյն իսկ այն գաւառաց մէջ յաջողակ և բանիրուն Առաջնորդք և ազգային վարչութիւնք՝ կեդրոնական վարչութեանէն պաշտպանուելով կրնան մեծ ծառայութիւն մատուցանել գաստիարակութեան : Կեդրոնական վարչութեանէն պաշտպանուելով կ'ըսենք, վասն զի ազխատութիւնը այնքան բիւրաւոր խոչընդոսաներ կրնայ յարուցանել լուսաւորութիւն տարածել ուղղ վարչութեան մը մը դէմ, որ առանց կեդրոնական վարչութեան պաշտպանութեան՝ շատ դժուար է գաստիարակութեան ծաւալումն այն գաւառաց մէջ, որոնք մինչև ցարդ զուրկ են անկէ :

Բայց թէ ինչպէս և ինչ հնարաւոր միջոցներ ի գործ դնել պէտք է գաստիարակութեան ծաւալման համար, այս մեծ խնդիրը Ազգային ժողովիդ և կամ այս մասին յատուկ կազմեալ Յանձնաժողովի մը գործ է. Յանձնաժողովս սա գիտողութիւնը միայն կը ներկայացնէ թէ՛ մէկ քանի գաւառաց մէջ վերջին անգամ ձեռք առնուած միջոցները քան որոնք արդարեւ ինչ որ գիշն զուրկ են, ուստի « ազգային գաստիարակութեան նախնական ընթացքի հիմ-

նական յատակագիծ մը պէտք է, առ հասարակ բոլոր հայաբնակ զիւզօրէից մէջ ուսանելու հարկարար և գիւրաւ աւանդելի և իւրաքանչիւր գաւառի մէջ գտնուած վանքերն ալ անկարող զիւզօրէից օժանդակ ըլլալու վիճակի մէջ պէտք է դրուին » :

ՎԵՐՉԱՐԱՆ ԵՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Գաւառացոց վիճակը քննելու և դարմանը խնդրելու հոգը առաջին անգամ է որ ձեռք կ'առնու Ազգային Ընդհանուր ժողովիդ և տարակոյս չկայ թէ պիտի ժամանէ իւր բաղձացած նպատակին, ունի որ յարգուի ընդհանուր ընթացքը պաշարած էին, մեծ պէտք մ'է Ազգին թէ՛ այս և թէ՛ միւս ամեն կենսական խնդրոց մէջ :

Ձանից յարատեւութիւնը, զերծ ամեն տեսակ վրդովումներէ՝ որ վերջին տասնամեայ ընթացքը պաշարած էին, մեծ պէտք մ'է Ազգին թէ՛ այս և թէ՛ միւս ամեն կենսական խնդրոց մէջ :

Այս ջանքերը կանոնաւորելու և արդիւնաւորելու խնդիրն ալ միշտ ուշադրութեան առնուլ հարկ է. այս մասին Ազգային Ընդհանուր ժողովիդ միայն ձեռքն հաս է և Յանձնաժողովս կը փութայ իւր անհրաժեշտ զեչ շնորհք քանի մը որոնք ինչպէս ինչ համար առաջարկել, որ Ընդհանուր ժողովիդ ուշադրութեան առնու զանոնք, կամ Յանձնաժողովներու մի-

ջոցաւ քննէ և ասոնք են :  
1° Ազգային ընդհանուր վիճակը : Ամեն ատեն այս վիճակը ըստ արժանւոյն քննելու և վիճակագրելու պէտքը՝ ներկայ Յանձնաժողովս զգալի կերպով կը տեսնէ :

2° Եկեղեցւոյն պարտեից վիճակը : Այս մասին պիտոյքը խիստ մեծ է. բաղձաթիւ գիւղերու քաղաքներ ալ զուրկ են ճշմարիտ վարդապետութենէ, որուն շնորհը թերեւս կիսադարձներու ալ հասնի :

3° Գործարարութեան վիճակը : որուն վրայ արդէն խօսուեցաւ :

4° Ազգային որոնցման վիճակը : Եկեղեցիք, վանօրայք և ամենայն կալուածք են ընդհանուր արձանագրութեան առնելու և պահպանելու պէտքը այնչափ ստիպողական դարձած է, որ ամեն մէկ ժամուկորուստն անդարմանելի է :

Յանձնաժողովս ներկայ Տեղեկագիրը մատուցանելով Ազգային Ընդհանուր ժողովիդ, կ'առաջարկէ որ ժողովիդ գիտազուրկութեան հանդերձ՝ յանձնուի Ազգային վարչութեան, որ Բարեխնամ կառավարութեան ուշադրութեանը ներկայացնելով պարտուպաշարած անօրէնութիւնը խնդրէ :

1871 Հոկտեմբեր 8 Ղալաթիա

ԱՆԴԱՄՔ ԳՍԻՍՈՒՍԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ

ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ	Առաջնորդ	Նիկիոսիոյ	ԱՏԵՆԱՊԵՏ
ՍԻՄԷՈՆ	»	Միքայիլ Ս. Երանաշէպ	
ԵՐԵՄԻԱ	»	Նիկիոսիոյ Առաջնորդ Բարեխնամ, Մարտի, Խորհրդի	
ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎՐԻ	»	Քրիստիան Բեբայի	
ԿԱՐԱՊԵՏ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ			
ԿԱՐԱՊԵՏ Ս. ԻԹԻՒՃԵԱՆ	Խորհրդի	Մարտի	
ՍՏԵՓԱՆ Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆՅ			ԱՏԵՆԱՊԵՏ
ՔՐԻՍՏՈՍՏՈՒՐ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ			
ՕԳՍԷՆ ԽՕՃԱՍԱՐԵԱՆ	Խորհրդի	Օրհմի	

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Այդ տեղեկագիրը պէտք է հրատարակութեամբ երեսփոխանաց հաղորդուի, որպէս զի անոր պարունակութեանը քաջ վերահասու լինին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ընդհ. ժողովոյ կազմած Յանձնաժողովն իւր պաշտօնը կատարելով՝ գաւառական հարստահարութեանց պատճառները քննել, դարմաններ մտածելու եւ անաւանակ թէ իւր քննութեան արդիւնքն եւ թէ առաջարկութիւններն ընդհ. ժողովոյ կը ներկայացնէ իւր տեղեկագրով. ուստի կ'առաջարկեմ որ ժողովը չնորհակալ լինի Յանձնաժողովոյ, այս աշխատասիրութեան համար: Իսկ տեղեկագիրն առանձինն տպագրել, եթէ միայն ատենագրութեան միջոցաւ ՚ի լոյս հանել՝ ժողովոյ կամքէն կախուսն ունի:

Ատենապետ էֆ. կը յայտնէ այս պահուս թէ ժողովոյ օրինական թիւը լրացած է եւ հետեւապէս յանուն ժողովոյ չնորհակալութիւն կը յայտնէ Գաւառական հարստահարութեանց քննութեան Յանձնաժողովոյն:

ՄԱԶԼՈՒՄԵԱՆ Յ. ԷՖ. — Յանձնաժողովոյ տեղեկագրէն կ'իմանամք որ քանի մը գաւառներ անպատասխանի թողեր են՝ հարստահարութեան վրայ տեղեկութիւն տալու համար՝ Յանձնաժողովոյ զրկած չըջարեալակներ: Միթէ այս լուծութեան պատճառները հասկցուած են, միթէ այդ գաւառները ազատ են հարստահարութեանէ. փափաքելի է ինձ գիտնալ:

Ատենապետ էֆ. կը հրաւիրէ զՓափագեան էֆ. այս հարցման պատասխանելու, իբր Ատենադպիր Գաւառական հարստահարութեանց քննութեան Յանձնաժողովոյ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ինչպէս տեղեկագրէն կ'երևի, Զմիւռնիոյ վիճակն արդէն իւր զրից պատճառաւ այս տեսակ կեղեքումներէ զերծ է, եւ քսան տարուան միջոցին մէջ անգամ մը միայն Զմիւռնիոյ մասին՝ շեղեցիկէ համար թագրի մատուցուել է Բ. Գրան. Պրուսա, Աղթամար եւ Կուտինա իրենց մէջ առաջնորդական վէճ ունենալուն պատճառաւ կ'երեւի թէ չը կրցան զրկել իրենց տեղեկագիրը. Բալուսի առաջնորդն ուղեց անձամբ դալ եւ բանիւ բերանոյ պատասխանել, եւ Յանձնաժողովոյս կրկին ազդարարութեան ամենեւին չը պատասխանեց. Մանճըլըս եւ Տիֆ-

րիկ յուս մնալ ընտրեցին. իսկ ՚ի Սերասիա չըջարեալական բնաւ չըղրկուեցաւ, հոն պատասխանելու համար՝ ոչ առաջնորդ եւ ոչ փոխանորդ գանուելուն համար:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տարակոյս չը կայ թէ միշտ աղէտ ու ցաւ կրողը կ'աղաղակէ եւ բարեկեցիկ ապրողը ձայն չունենար: Փափաքելի էր որ այս մասին ձայն չունեցողները շատ ըլլային:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կարծեմ տեղեկագրին վրայ դիտողութիւն ընելու ժամը չէ հիմայ:

ԱՂԱԲԷԿԵԱՆ Մ. ԷՖ. — Տեղեկագիրը կարգացուեցաւ, որպէս զի ժողովը մի անգամ զայն լսէ. իսկ արդ հարկ է որ միայն երեսփոխանաց հաղորդելու համար տպագրուի եւ դիտողութեան դրուելէ ետեւ՝ վերջնական տպագրութեան տրուի եւ հրատարակուի:

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Ես ալ ինձմէ՛ առաջ խօսող պաշտօնակցացս առաջարկութիւնները կը կրկնեմ եւ կ'ըսեմ թէ՛ պէտք է այդ տեղեկագիրն հրատարակութեամբ ՚ի լոյս ելնէ, որպէս զի Երեսփոխանական ժողովը մանրամասնօրէն հասու լինի անոր բովանդակութեան եւ այնուհետեւ իւր որոշումը տայ: Միայն՝ ժողովը չնորհակալութեան պարտք մ'ունի առ Յանձնաժողովը հատուցանելու, զի արդէն տեղեկագրին ընթերցումը լսեց եւ տեսաւ որ իսկի մըտօք կատարեւէ նա իր պաշտօնը, հարստահարութեանց պատճառները քննելով եւ այլ եւ այլ դարմաններ մտածելով: Այս դարմանները կըրնան քննադատուիլ, եւ սակայն ընդհանուր առմամբ տեղեկագրին քննական ամբողջութիւնն եւ պարունակութեան ճշդութիւնն անուրանալի է:

ՅՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Յանձնաժողովոյ չընորհակալութեան քուէ տալու համար Եուսուֆեան էֆ. ի ըրած առաջարկութիւնը կը կրկնեմ:

ԳԱՐԱԿԷՕՋԵԱՆ Կ. ԷՖ. — (Ապր. Յանձնաժողովոյ) Խօսք ուղեցի տեղեկագրին տպագրութեան նկատմամբ Յանձնաժողովոյ ունեցած կարծիքը յայտնելու համար:

Այս տեղեկագիրն ընդհ. ժողովոյ ներկայանալէն ետեւ ՚ի հարկէ Ատենագրութեան մէջ պիտի անցնի եւ անոր հետ հրատարակուի. սակայն Յանձնաժողովը կը մտածէր զայն առանձինն տպագրել, որպէս զի ամեն կարգի ազգայնոց զիրամատոյց լինի եւ գաւառներն ալ յուղարկուի ընթերցման համար: Աւստի կը խնդրեմ Ատենադպիր էֆ. էն որ այդ տեղեկա-

գիրը՝ ատենագրութեան մէջ տպագրել տալէ զատ՝ հինգ հարիւր օրինակ առանձինն տպագրել տալու ձանձրութիւնը բարեհաճի յանձնառնուլ:

ԱՂԱԲԷԿԵԱՆ Մ. ԷՖ. — Այս տեղեկագիրը ժողովը ՚ի քննի պիտի առնու, եւ թերեւս ինչ որ ներդրածեց մեր վրայ հիմայ տեղեկագրին ընթերցումը՝ քննութեան մէջ փոփոխութիւն մը կրէ. ուստի առ՝այժմ Յանձնաժողովոյ աշխատութեան համար միայն՝ չնորհակալ լինիլ հարկ է պարզօրէն:

Տ. ՆԵՐՍԷՍ ԵՊՍ. — (Իբր Առեւտրի Գաւառական հարստահարութեանց Գործադիր Յանձնաժողովոյ անդամք ինձ կը յանձնեն չնորհակալ լինիլ ժողովոյ կողմէ իրենց ցոյց արուած գործունակութեան համար: Յանձնաժողովն իւր պարտականութիւնը կատարած է եւ ասոր համար չնորհակալութեան չօգտաւէր: Իսկ ես՝ նաեւ իբր ընդարձակ վիճակի մը առաջնորդն՝ ՚ի մօտոյ տեղեկ գաւառացի Հայոց վիճակին, կըսեմ թէ չնորհակալութիւնը՝ մեր տառապեալ համազդի եղբարք այն ատեն պիտի մատուցանեն ՚ի սրտէ ընդհ. ժողովոյն, երբ սա Յանձնաժողովոյ տեղեկագրին վերջին մասը՝ աղէտից դարմանները՝ գործադրութեան դնէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Յանձնաժողովոյ Գեր. Ատենապետն, որքան որ Յանձնաժողովն իւր պարտաւորութիւնը կատարեց ուստի եւ չնորհակալութիւն չօգտաւէր կ'ըսէ, թո՛ղ ներէ ինձ սակայն յայտնել թէ՛ պարտաւորութեանց կատարումն առաքինութեանց ամենէն մեծն է եւ չնորհակալութեան իրաւամբ արժանի. ուստի Գիւանը չը վարանիր յանուն ժողովոյ չնորհակալութիւն յայտնելու առ Յանձնաժողովը:

Իսկ տեղեկագրին տպագրութեան խընդրոյն գալով, իմ կարծիքս այն է թէ՛ զայն առանձինն հրատարակելու հարկ չը կայ առ այժմ, քանի որ ցոյց արուած դարմաններուն մէջ այնպիսի միջոցներ կան առաջարկուած՝ որ անոնք մեր Ազգին միայն չեն վերաբերիր. զոր օրինակ շեղեցիկէ տեղ զօրք տալ եւ գաւառական ինքնէն անտուկներուն վերաբերեալ նոր տնօրէնութիւն ընել, եւն. որք տակաւին վիճաբանութեան եւ թերեւս բոլորովին փոխուելու ենթակայ են. ուստի խակ խնդիր մ'այժմէն տպագրութեամբ հրատարակել եւ ապա փոփոխութեանց ենթարկելէ լաւագոյն է՝ միայն ատենագրութեան մէջ անցընել:

ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ. — Ինչ որ ըսաւ Ատենապետ

էֆ. տեղեկագրին տպագրութեան մասին՝ կը կրկնեմ եւ ես, եւ կը կարծեմ թէ զայն առանձինն հրատարակել անքաղաքագիտական գործ մ'է միանդամայն. սակայն քանի որ նոյն տեղեկագիրը յատենի ժողովոյ կարգացուեցաւ, անտարակոյս ատենագրութեան մէջ պիտի անցնի եւ անոր հետ հրատարակուելով ՚ի լոյս ելնէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ըստ որում Յանձնաժողովն առանց տպագրելու բերաւ իր տեղեկագիրը, բաւական է ըստ իս՝ որ Գիւանն ատենագրութեան միջոցաւ միայն տպագրել տայ զայն, մանաւանդ որ դեռ եւս ժողովոյ նկատողութեան պիտի ենթարկուի:

Ժողովն այս կարծեաց կը միտի, ուստի եւ տեղեկագրին ատենագրութեան մէջ տպագրել կ'որոշուի:

ՀՐԱԺԱՐԱԳԻՐ

Ատենադպիր էֆ. Թորոսեան Գրիգոր էֆ. ի կողմէ ուղղեալ գրութիւն մը կ'ընթեռնու, ուրով անձնական վատառողջութեան պատճառաւ հրաժեշտ կուտար նա երեսփոխանութեան պաշտօնէն:

Ատենապետ էֆ. այս հրաժարականին վրայ ժողովոյն կարծիքը կը հարցընէ, որ առանց դիտողութեան կ'ընդունի նոյն հրաժարականը:

Ատենապետ էֆ. կ'անցնի օրուան կարգին:

ՎԱԻԵՐԱՑՈՒՄՆ ՆՈՐԸՆՏԻՐ ԵՐԵՍՓՈՒԱՆԱՅ

Ընդհ. ժողովոյ վերանորոգման Գործադիր Յանձնաժողովն երեսփոխանական նորոգ ընտրութեանց վրայ տեղեկագիր մը մատուցած էր, ուղղեալ առ Նախագահ Սրբազանն:

Ատենադպիր էֆ. սոյն տեղեկագիրը ներկայացուց ժողովոյն եւ ընթերցաւ, որոյ պատճէնըն աւասիկ:

Ամեն. Սրբազան Հայր, Նախագահ եւն.

Բերայի հրաժարեալ չորս երեսփոխանաց տեղ՝ սեպտեմբեր 26ին ընտրութեան կատարուելով, 200ի մօտ ընտրողներէն 33ին քուէարկութեամբն եւ բացարձակ ստաւելութեամբ

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Այդ տեղեկագիրը պէտք է հրատարակութեամբ երեսփոխանաց հաղորդուի, որպէս զի անոր պարունակութեանը քաջ վերահասու լինին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ընդհ. ժողովոյ կազմած Յանձնաժողովն իւր պաշտօնը կատարելով՝ գաւառական հարստահարութեանց պատճառները քննել, դարձաններ մտածելու եւ անաւասիկ թէ իւր քննութեան արդիւնքն եւ թէ առաջարկութիւններն ընդհ. ժողովոյ կը ներկայացնէ իւր տեղեկագրով. ուստի կ'առաջարկեմ որ ժողովը չնորհակալ լինի Յանձնաժողովոյ, այս աշխատասիրութեան համար : Իսկ տեղեկագիրն առանձինն տպագրել, եթէ միայն ատենագրութեան միջոցաւ ի լոյս հանել ժողովոյ կամքէն կախումն ունի :

Ատենապետ էֆ. կը յայտնէ այս պահուս թէ ժողովոյ օրինական թիւը լրացած է եւ հետեւապէս յանուն ժողովոյ չնորհակալութիւն կը յայտնէ Գաւառական հարստահարութեանց քննութեան Յանձնաժողովոյն :

ՄԱԶԼՄԵԱՆ Յ. ԷՖ. — Յանձնաժողովոյ տեղեկագրէն կ'իմանա՞մք որ քանի մը գաւառներ անպատասխանի թողել են հարստահարութեան վրայ տեղեկութիւն տալու համար՝ Յանձնաժողովոյ զրկած շրջաբերականը : Միթէ այս լուրթեան պատճառները հասկցուած են, միթէ այդ գաւառները ազատ են հարստահարութենէ. փափաքելի է ինձ գիտնալ :

Ատենապետ էֆ. կը հրաւիրէ զՓափազեան էֆ. այս հարցման պատասխանելու, իբր Ատենազգայիր Գաւառական հարստահարութեանց քննութեան Յանձնաժողովոյ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ինչպէս տեղեկագրէն կ'երևի, Զմիւռնիոյ վիճակն արդէն իւր գրից պատճառաւ այս տեսակ կեղեքումներէ զերծ է, եւ քսան տարուան միջոցին մէջ անգամ մը միայն՝ Զմիւռնիոյ մասին՝ ղեքէլէյէն համար թագրիր մատուցուել է Բ. Գրան. Պրուսա, Աղթամար եւ Աուսինա իրենց մէջ առաջնորդական վէճ ունենալուն պատճառաւ կ'երևի թէ չը կրցան զրկել իրենց տեղեկագիրը. Բալուի առաջնորդն ուղեց անձամբ զալ եւ բանիւ բերանոյ պատասխանել, եւ Յանձնաժողովոյս կրկին աղղարարութեան ամենեւին չը պատասխանեց. Մանճըլըն եւ Տիւ-

րիկ լուռ մնալ ընտրեցին. իսկ ՚ի Սերասփա շրջաբերական բնաւ չըղբկուեցաւ, հոն՝ պատասխանելու համար՝ ոչ առաջնորդ եւ ոչ փոխանորդ գանուելուն համար :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տարակոյս չը կայ թէ միշտ աղէտ ու ցաւ կրողը կ'աղաղակէ եւ բարեկեցիկ ապրողը ձայն չունենար : Փափաքելի էր որ այս մասին ձայն չունեցողները շատ ըլլային :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կարծեմ տեղեկագրին վրայ դիտողութիւն ընելու ժամը չէ հիմայ :

ԱՂԱՔԷԿԵԱՆ Մ. ԷՖ. — Տեղեկագիրը կարգացուեցաւ, որպէս զի ժողովը մի անգամ զայն լսէ. իսկ արդ հարկ է որ միայն երեսփոխանաց հաղորդելու համար տպագրուի եւ դիտողութեան դրուելէ ետեւ՝ վերջնական տպագրութեան տրուի եւ հրատարակուի :

ՅՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Ես ալ ինձմէ՛ առաջ խօսող պաշտօնակցացս առաջարկութիւնները կը կրկնեմ եւ կ'ըսեմ թէ՛ պէտք է այդ տեղեկագիրն հրատարակութեամբ ՚ի լոյս ելնէ, որպէս զի երեսփոխանական ժողովը մանրամասնօրէն հասու լինի անոր բովանդակութեան եւ այնուհետեւ իւր որոշումը տայ : Միայն՝ ժողովը չնորհակալութեան պարտք մ'ունի առ Յանձնաժողովն հատուցանելու, զի արդէն տեղեկագրին ընթերցումը լսեց եւ տեսաւ որ իսկի մըտօք կատարելէ նա իր պաշտօնը, հարստահարութեանց պատճառները քննելով եւ այլ եւ այլ դարձաններ մտածելով : Այս դարձանները կըրնան քննադատուիլ, եւ սակայն ընդհանուր առմամբ տեղեկագրին քննական ամբողջութիւնն եւ պարունակութեան ճշգրտութիւնն անուրանալի է :

ՅՈՒԱԿԻՄԵԱՆ Յ. ԷՖ. — Յանձնաժողովոյ չընորհակալութեան քուէ տալու համար Նուսուֆեան էֆ. ի ըրած առաջարկութիւնը կը կրկնեմ :

ԳԱՐԱԿԷՕՋԵԱՆ Կ. ԷՖ. — (Անոր՝ Յանձնաժողովոյ) Խօսք ուղեցի տեղեկագրին տպագրութեան նկատմամբ Յանձնաժողովոյ ունեցած կարծիքը յայտնելու համար :

Այս տեղեկագիրն ընդհ. ժողովոյ ներկայանալէն ետեւ ՚ի հարկէ Ատենագրութեան մէջ պիտի անցնի եւ անոր հետ հրատարակուի. սակայն Յանձնաժողովը կը մտածէր զայն առանձինն տպագրել, որպէս զի ամեն կարգի ազգայնոց դիւրամատոյց լինի եւ գաւառներն ալ յուղարկուի ընթերցման համար : Ուստի կը խնդրեմ Ատենագրուի էֆ. էն որ այդ տեղեկա-

գիրը՝ ատենագրութեան մէջ տպագրել տալէ զաւա՛ հինգ հարիւր օրինակ առանձինն տպագրել տալու ձանձրութիւնը բարեհաճի յանձնառնուլ :

ԱՂԱՔԷԿԵԱՆ Մ. ԷՖ. — Այս տեղեկագիրը ժողովն ՚ի քննի պիտի առնու, եւ թերեւս ինչ որ ներդրածեց մեր վրայ հիմայ տեղեկագրին ընթերցումը՝ քննութեան մէջ փոփոխութիւն մը կրէ. ուստի առ՝այժմ Յանձնաժողովոյ աշխատութեան համար միայն՝ չնորհակալ լինիլ հարկ է պարզօրէն :

Տ. ՆԵՐՍԷՍ ԵՊՍ. — (Իբր Առէնապետ Գաւառական հարստահարութեանց քննչ Յանձնաժողովոյ) Յանձնաժողովոյ անդամք ինձ կը յանձնեն չնորհակալ լինիլ ժողովոյ կողմէ իրենց ցոյց արուած գոհունակութեան համար : Յանձնաժողովն իւր պարտականութիւնը կատարած է եւ ասոր համար չնորհակալութեան չտպասէր : Իսկ ես՝ նաեւ իբր ընդարձակ վիճակի մը առաջնորդն՝ ՚ի մօտոյ տեղեկ գաւառացի Հայոց վիճակին, կըսեմ թէ չնորհակալութիւնը՝ մեր տառապեալ համազգի եղբարք այն ատեն պիտի մատուցանեն ՚ի սրտէ ընդհ. ժողովոյն, երբ սա Յանձնաժողովոյ տեղեկագրին վերջին մասը՝ աղէտից դարձանները՝ գործադրութեան դնէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Յանձնաժողովոյ Գեր. Ատենապետն, որքան որ Յանձնաժողովն իւր պարտաւորութիւնը կատարեց ուստի եւ չնորհակալութիւն չտպասէր կ'ըսէ, թո՛ղ ներէ ինձ սակայն յայտնել թէ՛ պարտաւորութեանց կատարումն առաքինութեանց ամենէն մեծն է եւ չնորհակալութեան իրաւամբ արժանի. ուստի Գիւանը չը վարանիր յանուն ժողովոյ չնորհակալութիւն յայտնելու առ Յանձնաժողովն :

Իսկ տեղեկագրին տպագրութեան խնդրոյն գալով, իմ կարծիքս այն է թէ՛ զայն առանձինն հրատարակելու հարկ չը կայ առ այժմ, քանի որ ցոյց արուած դարձաններուն մէջ այնպիսի միջոցներ կան առաջարկուած՝ որ անոնք մեր Ազգին միայն չեն վերաբերիր. զոր օրինակ ղեքէլէյէն տեղ զօրք տալ եւ գաւառական էսէն մտուկներուն վերաբերեալ նոր տնօրէնութիւն ընել, եւն. որք տակաւին վիճաբանութեան եւ թերեւս բոլորովին փոխուելու ենթակայ են. ուստի իսակ խնդիր մ'այժմէն տպագրութեամբ հրատարակել եւ ապա փոփոխութեանց ենթարկել լուաղոյն է՝ միայն ատենագրութեան մէջ անցնել :

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ. — Ինչ որ ըսաւ Ատենապետ

էֆ. տեղեկագրին տպագրութեան մասին կը կրկնեմ եւ ես, եւ կը կարծեմ թէ զայն առանձինն հրատարակել անքաղաքագիտական գործ մ'է միանգամայն. սակայն քանի որ նոյն տեղեկագիրը յատենի ժողովոյ կարգացուեցաւ, անտարակոյս ատենագրութեան մէջ պիտի անցնի եւ անոր հետ հրատարակուելով ՚ի լոյս ելնէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ըստ որում Յանձնաժողովն առանց տպագրելու բերաւ իր տեղեկագիրը, բաւական է ըստ իս՝ որ Գիւանն ատենագրութեան միջոցաւ միայն տպագրել տայ զայն, մանաւանդ որ դեռ եւս ժողովոյ նկատողութեան պիտի ենթարկուի :

Ժողովն այս կարծեաց կը միտի, ուստի եւ տեղեկագրին ատենագրութեան մէջ տպագրել կ'որոշուի :

ՀՐԱԺԱՐԱԳԻՐ

Ատենագրուի էֆ. Թորոսեան Գրիգոր էֆ. ի կողմէ ուղղեալ գրութիւն մը կ'ընթեռնու, որով անձնական վատառողջութեան պատճառաւ հրաժեշտ կուտար նա երեսփոխանութեան պաշտօնէն :

Ատենապետ էֆ. այս հրաժարականին վրայ ժողովոյն կարծիքը կը հարցնէ, որ առանց դիտողութեան կ'ընդունի նոյն հրաժարականը :

Ատենապետ էֆ. կ'անցնի օրուան կարգին :

ՎԱԻԵՐԱՅՈՒՄՆ ՆՈՐԸՆՏԻՐ ԵՐԵՍՓՈՒԱՆԱՅ

Ընդհ. ժողովոյ վերանորոգման Գործադիր Յանձնաժողովն երեսփոխանական նորոգ ընտրութեանց վրայ տեղեկագիր մը մատուցած էր, ուղղեալ առ Նախագահ Սրբազանն :

Ատենագրուի էֆ. սոյն տեղեկագիրը ներկայացուց ժողովոյն եւ ընթերցաւ, որոյ պատճէնըն աւասիկ :

Ամեն. Սրբազան Հայր, Նախագահ եւն. .

Բերայի հրաժարեալ չորս երեսփոխանաց տեղ՝ սեպտեմբեր 26ին ընտրութեան կատարուելով, 200ի մօտ ընտրողներէն 33ին քուէարկութեամբն եւ բացարձակ առաւելութեամբ

երեսփոխան ընտրուած են ,

- Գրիգոր Էֆ. Օտեան , 26 քուէով
- Տելամաք » Էքսէրճեան, 26 »
- Սարգիս » Սըվաճեան, 23 »
- Նշան » Քաղաղեան, 22 »

Եէնի-Գաբուլի հրաժարեալ մէկ երեսփոխանի տեղ հոկտեմբեր 3ին ընտրութիւն կատարուելով , 240 ընտրողներէն 32ին քուէարկութեամբ ըն եւ բացարձակ առաւելութեամբ երեսփոխան ընտրուած է ,

Կարապետ Էֆ. Փափազեան , 24 քուէով : Գործադիր Յանձնաժողովս սոյն ընտրութեանց օրինաւորութիւնը հաստատելով կը փութայ մատուցանել Ընդհ. Ժողովոյ 'ի վաւերացումն : Ղալաթիա 8 Հոկտեմբ. 1871

Ատենադպիր	Ատենապետ
Ս. Գ. Գ. ՓԱՓԱԶԵԱՆ	Օ. ԽՕՏԱՍՄԵԱՆ

Այս տեղեկագրին ընթերցումէն ետեւ՝ Ատենապետ Էֆ. Ժողովոյն գիտողութիւնն ուզեց յիշեալ երեսփոխանական նորոգ ընտրութեանց վրայ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ ԽԱԶ. ԷՖ. — Երբ երեսփոխանական ընտրութիւն մը կատարուի , Քաղ. Խորհրդոյ անդամոց թուոյն վրայ թաղին պատուաւոր բնակիչներէն՝ երեքէն մինչեւ վեց անձինք կ'աւելնան ու այնպէս Ընտրողական Ժողով կը կազմուի , որ ընտրական գործողութիւնները կը կարգադրէ եւ անոնց օրինաւորութեան վրայ կը հսկէ : Արդ կը հարցնեմ թէ՛ Եէնի-Գաբուլի երեսփոխանական ընտրութեան ատեն՝ այսպէս օրինաւոր Ընտրողական Ժողով մը կազմուած է , թէ ոչ : Այս հարցման պատասխան կը խընդրեմ , յայտնելով թէ իմ խօսքս ընտրեալ երեսփոխանին անձին եւ արժանաւորութեան չը վերաբերիր ընաւին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գործադիր Յանձնաժողովն ընտրական գործողութեանց օրինաւորութեանը կ'երաշխաւորէ Ընդհ. Ժողովոյ առջեւ , եւ անոր երաշխաւորութեան Ժողովը կը վրստահի . ուստի աւելորդ կը զանեմ ես խնդիր յարուցանել ընտրութեանց նկատմամբ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ ԽԱԶ. ԷՖ. — Ըսել կուզեմ թէ՛ Եէնի-Գաբուլի մէջ օրինաւոր Ընտրողական Ժողով կազմուած չէ եւ այդ ընտրութիւնը օրինաւորապէս չէ կատարուած :

Այս պահուս ատեանը կ'ընդհատի եւ Ժո-

ղովը սակաւ ինչ դադար առնելէ ետեւ՝ կ'սկսի վերստին շարունակուիլ :

Ատենապետ Էֆ.՝ երեսփոխանական ընտրութեանց խնդիրը վերստին ձեռք առնելով Բերայի ընտրութեանց վրայ առանձինն Ժողովոյ գիտողութիւնը կ'ուզէ : Ոչ ոք գիտողութիւն կը յայանէ . հետեւապէս Ատենապետ Էֆ. քուէի դնելով Ժողովն ընդհանուր հաւանութեամբ կը հաստատէ Գործադիր Յանձնաժողովոյ կողմէ ծանուցեալ Բերայի չորս երեսփոխան ընտրութիւնը :

Իսկ Եէնի-Գաբուլի ընտրութեան խնդիրն՝ ըստ որում գիտողութեան ենթակայ՝ Ատենապետ Էֆ. Գործադիր Յանձնաժողովոյ կը վերադարձնէ , բացատրութիւն ստանալու համար :

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԸՆԹԱՅ Լ. ՆԻՍՏԻ

Ատենապետ Էֆ. նախընթաց Լ. Նիստի ատենադրութեան վրայ նորեկ Ժողովականաց ալ գիտողութիւնը կ'ուզէ , սակայն գիտողութիւն ընող չը գտնուելով ընդունուած կը հրատարակէ՝ զայն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թէ եւ Ժողովը պիտի հրաւիրէի անմիջապէս Ատենական Կանոնադրին քննութեան անցնելու , սակայն Նախագահ Սրբազանը Քաղ. Ժողովոյ նկատմամբ խօսք ունենալով եւ Ժողովոյս վաւերացման ներկայելի նորընտիր անդամոց ցուցակ մը բերած ըլլալով , կ'ստիպուիմ Ատենական Կանոնադրութիւնը յաջորդ նիստին թողուի :

Այս կանոնադրին հարկը հետզհետէ ստիպողական վիճակ մը կ'ստանայ , վասն զի անոր չգոյութենէն անորոշ կը մնան Ժողովականաց եւ Գիւանի անդամոց ատենական փոխադարձ յարաբերութիւններն , եւ մերթ ընդ մերթ բողոքներ իսկ կը ծնին , ինչպէս այս անգամ ալ Յ. Արշակ Էֆ. բողոք մ'ուռէր Գիւանին դէմ , զոր ետ առաւ իմ առաջարկութեանս վրայ , այն յուսով որ Ատենական Կանոնադրին 'ի մօտոյ կը հաստատուի եւ բողոքներու տեղի չը թողուր :

Ատենապետ Էֆ. այս յայտարարութիւնն ը-

նելով , անցաւ Քաղ. Ժողովոյ վերաբերեալ խնդրոյն :

ՎԱԽԵՐԱՅՈՒՄՆ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՆԴԱՄՈՅ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՔԱՂ. ԺՈՂՈՎՈՅ

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Երեսփոխանական Ժողովը նախորդ նիստին մէջ Քաղ. Ժողովոյ հրաժեշտն անընդունելի դատեց , վերահաստատեց զայն եւ յանձնարարութիւն ըրաւ ինձ՝ որ ջան 'ի գործ դնելով համոզեմ անոր անդամներն իրենց պաշտօնը շարունակելու : Ընդհ. Ժողովոյ այս որոշման համաձայն՝ Քաղ. Ժողովոյ Ատենապետն եւ անդամները քսնիցս 'ի մի գումարեցի , բանակցեցայ , յորդորեցի եւ վերջապէս իրենց պաշտօնը վերստին յանձն առնել տուի խմբովին : Եւ սակայն փոխադարձ առաջարկութիւն մը կ'ընեն ինձ , զոր Ընդհ. Ժողովոյ հաղորդել պարտքս է : Ի սկզբան Քաղ. Ժողովն երբ պաշտօնի կոչուեցաւ եւ ընդունեց զայն , իւր գլխաւոր փափաքն էր որ Սահմանադրութեան վերաքննութիւնը փութով աւարտի , եւ այս յուսով տրամադիր էր ցվերջ վերաքննութեան իւր պաշտօնը շարունակելու . սակայն այլ եւ այլ խնդիրներ երեւան եկան եւ իւր ակնկալութեան հակառակ վերաքննութիւնն երկարեցաւ , այնպէս որ ինքն ալ ըստիպուեցաւ հրաժեշտ տալու իւր պաշտօնէն . եւ հիմայ որ Ընդհ. Ժողովը վերահաստատեց զինքը , մի եւ նոյն փափաքը կը տածէ , կը յայտնէ , եւ կը խոստանայ թէ եւ իւր պաշտօնը մինչեւ յառաջիկայ մայիս շարունակել , որով պաշտօնատարութեան երկամեայ շրջան մը բողոքած կը լինի , միայն թէ վստահ ըլլալ կ'ուզէ որ Սահմանադրութեան վերաքննութիւնն ալ մինչեւ այն ատեն աւարտի :

Երբ այս վստահութեան խօսքն անցաւ , խոստացայ 'ի գործ դնել Ընդհ. Ժողովոյ հետ՝ ինչ որ հարկ է վերաքննութեան աւարտման համար . ահա այս պայմանաւ Քաղ. Ժողովն իւր պաշտօնը վերստին շարունակել յանձն առաւ :

Եւ թէպէտ Քաղ. Ժողովոյ անդամոց թիւը քսանէն՝ որ շատ էր ստուգիլ՝ վեցի զեղջուած էր , սակայն մէկ ու կէս տարուան փորձն ալ եցոյց որ հինգ վեց անդամէ բաղկացեալ Ժողով մը — հինգ ըսի , վասն զի անոր անդամներէն մին՝ Տօքթ. Ռաֆայէլեան Էֆ. հրաժարած էր արդէն — շաքաթը միանգամ եւեթ գումարուելով չը կրնար երեք միլիոն Հայոց ազգային գործե-

րը տնօրինել . ուստի բնականաբար հարկ եկաւ յերեւան Քաղ. Ժողովոյ մնացեալ հինգ անդամոց թիւոյն վրայ չորս անձինք եւս յաւելուի . մանաւանդ որ խորհուրդ մը կայ Քաղ. Ժողովն երկու մասի՝ դաւառական եւ տեղական ճիւղերու՝ բաժնելու եւ շարաթն երկու անգամ գումարելու . թէ եւ այս խորհուրդը կրնայ յատոյ լաւագոյն փոփոխութիւն մը կրել ըստ պահանջման հարկին :

Քաղ. Ժողովոյ նորընտիր չորս անդամներն են .

- Կոստանդ Յակոբ Էֆ.
- Մոմճեան Միքայէլ »
- Ստիմարաճեան Գէորգ »
- Աւրանեան Մանուկ »

Արդ այս ընտրութիւնն Ընդհ. Ժողովոյ հաւանութեանը կը ներկայացնեմ , յայտնել փութալով թէ ոչ յինքնէն , այլ իմ աջակցացս՝ Քաղ. Ժողովոյ անդամոց հետ համախորհուրդ կատարած եմ զայն , այն արտօնութեան վրայ կոթընելով՝ զոր տուած էր ինձ՝ երեսփոխանական Ժողովը , Յատկապէս կը յիշեմ այս պարագան , որպէս զի յետոյ խնդիր մը չը դառնայ այս ալ եւ իմ վրայ չը ծանրանայ գլխովին : Ընդհ. Ժողովին է հիմայ իւր գիտողութիւններն ընել այս ընտրութեան վրայ :

ՊԵՏԵԱՆ Թ. ԷՖ. — Շնորհակալ եմ որ Քաղ. Ժողովն ազգասիրաբար յանձն առեր է իր պաշտօնը շարունակել , սակայն պայման դնել՝ որ Ընդհ. Ժողովը մինչեւ յառաջիկայ մայիս աւարտէ Սահմանադրութեան վերաքննութիւնը , կարելի չէ եւ Ընդհ. Ժողովը չը կրնար ընդունիլ : Քաղ. Ժողովն՝ առանց իւր պաշտօնին տեւողութեան համար պայմաններ դնելու՝ ինք որքան ատեն որ ուզէ՝ կրնայ այնքան կատարել իր պաշտօնը :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կը կրկնեմ :

ԱՂԱԲԷԿԵԱՆ Մ. ԷՖ. — Չեմ կարծեր որ Քաղ. Ժողովն իւր պաշտօնատարութեան իբր պայման առաջարկած լինի Սահմանադրութեան վերաքննութեան աւարտման խնդիրը , այլ թերեւս խորհուրդ տուած լինի թէ՛ ինք մէկ կողմէն պիտի աշխատի Ազգին վարչական գործերը տընօրինելու եւ միւս կողմէ՝ հարկ է որ Ընդհ. Ժողովը Սահմանադրութեան վերաքննութիւնն աւարտէ : Եւ յիրաւի Ընդհ. Ժողովն ալ պարտաւոր է ազգային օրէնքը փութով հաստատելու :

Իսկ Ազգային Վարչութեան վրայ նկատողու-

թիւն մ'ունիմ : Նախորդ նիստին մէջ կրօն. ժողովոյ կազմութեան եղանակին վրայ խնդիր յուղուեցաւ եւ ըսին թէ՛ Ընդհ. ժողովը իրաւունք չունի . . . :

Ատենապետ էֆ. յայտնելով թէ կրօն. ժողովոյ խնդիր յուղելու ատեն չէ եւ անոր ընտրութեան խնդիրը՝ խնդրոց կարգին մէջ անցած ըլլալով ժողովոյ պիտի ներկայանայ իր կարգին, խնդրեց Ատենաբան էֆ.էն որ խնդրէն չը չեղի :

ԱՂԱՔԷԿԵԱՆ Մ. ԷՖ. — (Շորոշակէլ) Եթէ կրօն. ժողովոյ վրայ կը խօսիմ այս պահուստ, պատճառն այն է որ այդ ժողովը չատ մեծ աւրնչութիւն ունի Քաղաքականին հետ, եւ սակայն խօսելու համար կ'սպասեմ կարգին :

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՖ. — Սահմանադրութեան վերաքննութիւնն առիթ մ'եղած է զայն բռնաբարելու : Եթէ ուզենք կատարեալ վերաքննութիւն ընել կարծեմ դժուարին է : Քաղ. ժողովոյ առաջարկութիւնն՝ այն է վերաքննութիւնը չուտով աւարտել՝ իրաւացի է, սակայն իրաւաբանական սկզբունք մը կայ այս պարագայիս մէջ : Արդէն ընդունուած օրէնքի մը այս կամ այն յօդուածը կամ տրամադրութիւնը ներելի չէ անգործադրելի թողուլ, երբ նոյնը փոփոխուած եւ տեղն ուրիշ յօդուած մը անցած չէ . վասն զի հետեւաբար նոյն յօդուածը օրէնքի ոյժ ունի միշտ : Ուստի երբ այսօր կը տեսնուի թէ Սահմանադրութեան Քաղ. ժողովոյ վերաբերեալ տրամադրութիւններն՝ անգործադրելի են եւ փոփոխութեան կարօտ, Ընդհ. ժողովն անմիջապէս զայն պէտք է վերաքննէ, փոփոխէ եւ տեղը նոր մ'անցնէ, որ այն ատեն հին յօդուածը կամ տրամադրութիւնը իւր օրինական ոյժը կորուսելով նորը լինի գործադրելի : Այսպէս նաեւ այն ամեն տրամադրութիւններն, որոց գործադրութիւնը դժար կամ անհրնար կը դատուի, եթէ Ընդհ. ժողովն անմիջապէս վերաքննէ եւ տեղն ուրիշն անցնէ, Սահմանադրութիւնը վերաքննութեան պատճառանօք ամբողջապէս անգործադրութեան ենթակայ չը լինիր եւ վերաքննութիւնն ալ գործնական կերպով կը կատարի : Քաղ. ժողովոյ առաջարկութիւնն այս եղանակաւ միայն կրնայ ՚ի գործ դրուիլ եւ վերաքննութիւնը կատարուիլ, եթէ ոչ՝ այն հետեւանքին կը հասնինք, ուր պէտք կ'ըլլայ ըսել թէ՛ Սահմանադրութիւնը վերցուած է եւ տեղը զիկատարութիւն հաստատուած :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդիրն ամփոփենք : Նախագահ Սրբազանը նախորդ նիստին իրեն յանձնուած խնդիր մը կը բերէ ժողովոյն, անոր ելքը յայտնելով :

Քաղ. ժողովը յանձն առեր է վերստին իւր պաշտօնը շարունակել, սակայն իւր անդամոց թիւն անբաւական լինելուն՝ Նախագահ Սրբազանին հետ խորհրդակցութեամբ չորս ժողովական եւս յաւելցնելու հարկ տեսեր եւ անոնց ընտրութիւնը կատարեր է, որոց անունները յիշեց Նախագահ Սրբազանն եւ ընտրութիւնը ժողովոյս հաւանութեանը ներկայացուց : Միայն հարկ է գիտնալ թէ՛ Քաղ. ժողովը վերաքննութեան նկատմամբ ըրած առաջարկութիւնը իրր անհրաժեշտ պայմանն կը բերէ իր պաշտօնավարութեան համար :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Ո՛չ :

ԻԻԹԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Նախընթաց նիստերուն մէջ Քաղ. ժողովոյ հրաժարականին վրայ եղած վիճարանութիւններէն տեսնուեցաւ որ՝ դժուարութիւններ կային ՚ի նորոյ Քաղ. ժողով կազմելու, ուստի Երեսփոխանական ժողովը Քաղաքականին հրաժարականը չընդունեց : Նախագահ Սրբազանին պահ մ'առաջ ըրած յայտարարութենէն իմացանք որ՝ Քաղ. ժողովը յանձն առեր է իր պաշտօնը, միայն՝ Սահմանադրութեան վերաքննութեան փութով աւարտելուն կը փափաքի եղեր : Ընդհանուր Ազգին փափաքն է այս . եւ թէպէտ Նախագահ Սրբազանը խոստացեր է ամեն ջան ՚ի գործ դնել փափաքուած նպատակին հասնելու համար, սակայն կարելի է որ մինչեւ յառաջիկայ մայիս վերաքննութիւնը չը վերջանայ : Ուստի ես ալ կ'առաջարկեմ Պառնասեան էֆ. ի հետ, սակայն առանց անոր առաջարկութեան բոլոր մասերն ընդունելու, որ Ընդհ. ժողովը վերաքննութեան ատեն առաջ անցնելով Սահմանադրութեան այն մասերը, որք երեւան եկած այս կամ այն ստիպողական խնդրոյն յարակից են, նախապէս զանոնք վերաքննէ, փոփոխէ եւ այսպէս վերաքննութիւնն Քաղ. ժողովոյ ընտրութեան վերաբերեալ յօդուածներն, անոնց թերին կատարելագործուի, նոր յօդուածներ անցնի հիններուն տեղ, որ ատեն նմանօրինակ պարագաներու մէջ օրէնքն այլափոխելու հարկ չը մնար . վերաքննութեան աւարտման համար Քաղ. ժողովոյ փափաքն ալ՝ այս կերպով լրացած կը լինի եւ իւր հրաժարականը մատուցած տեն՝ Սահմանադրութեան այն մասը, որ Քաղ.

ժողովոյ կազմութեան եւ հանգամանաց կը վերաբերի, վերաքննուած կըլլայ եւ նոր օրէնքը հաստատուած :

ԵՌԻՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Երեսփոխանական ժողովս նախընթաց նստին մէջ Քաղ. ժողովոյ հրաժարականն անընդունելի դատեր եւ որոշեր է որ նա իւր պաշտօնը շարունակէ : Այս որոշումը Նախագահ Սրբազան հաղորդեց Քաղ. ժողովոյ անդամոց, որ ընականաբար մեծ տըպաւորութիւն ներգործեց ասոնց վրայ : Քաղ. ժողովն երբ պաշտօնի կոչուեցաւ հիմնադիմ մը հրատարակեց եւ բացատրեց թէ ի՛նչ պայմաններով պիտի վարէր իր պաշտօնը . նոյնպէս երբ մայիս ամսոյ սկիզբը հրաժարական մատուցեց, հրաժեշտի պատճառը բացատրեց իւր համարատուութեան տեղեկագրին նախաքանին մէջ : Եւ որովհետեւ Ընդհ. ժողովոյ մէջ ոչ ոք մեկնեց ցարդ այս կէտը, ներելի ըլլայ ինձ բացատրութիւն մը տալ :

Ազգային ժողովն ասկէ առաջ Սահմանադրութեան վերաքննութիւնը կը վճռէ, Քաղ. ժողովոյ անդամոց թիւը կը զեղջէ եւ ընտրութեան եղանակը տարրեր կերպի վերածելով Սրբազան Նախագահի ձեռօք նոր Քաղ. ժողով մը կը կազմէ, ցվիրջ վերաքննութեան պաշտօն վարելու համար : Նորընտիր ժողովը զինքն Ընդհ. ժողովոյ պատասխանատու կը դառնի հրատարակութեամբ եւ կը խոստանայ Ազգին՝ Սահմանադրութեան ոգին յարգելու մտադիր լինիլ : Քաղ. ժողովն այս սկզբանց հաւատարիմ ծառայեց Ազգին, բայց տեսնելով որ վերաքննութեան աւարտման ժամանակը կարելի չը լինիր գուշակել, հրաժարեցաւ, իր առջեւ Սահմանադրութեան տարեգլուխ մը տեսնելով : Բայց Ընդհ. ժողովն այս հրաժարականը չընդունեց եւ Սրբազան Նախագահ Հօր միջոցաւ պարտաւորեց զՔաղ. ժողովն իւր պաշտօնը շարունակելու : Փանի որ այս պաշտօնավարութիւնը մինչեւ Սահմանադրութեան վերաքննութեան աւարտումը պիտի տեսէր, Քաղ. ժողովն ուզեց զիանալ թէ ո՛ր ատեն պիտի աւարտի այն : Ասով Ընդհ. ժողովը հարկի մը տակ դնել չէ իր միտքը՝ այլ վերաքննութեան ստիպողականութիւնն զգացնել . վասն զի մինչեւ յառաջիկայ մայիս այդ վերաքննութիւնը աւարտած լինի թէ ոչ, Քաղ ժողովն իր համարատուութիւնն ու հրաժեշտը պիտի մատուցանէ Ընդհ. ժողովոյ : Ահաւասիկ այս կէտին վրայ է խնդիրը . կ'աղաչեմ որ սխալ մեկնութիւն չը տրուի :

Այս յայտարարութիւնն իմ բոլոր ընկերակցացս կողմէ ընելով շնորհակալութիւն կը մատուցանեմ նաեւ Ընդհ. ժողովոյ, այն մեծ վստահութեան համար՝ որով պատուեց Քաղ. ժողովն այս պարագային մէջ :

(Քաղ. ժողովը շնորհակալութիւն արտայայտեց Քաղ. ժողովին : — Նոր ընտրութիւնները + ուրիշ Երբէ՛ + . Գիշտեմք ինչպէ՛ս : + ուրիշ Երբէ՛ + )

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանը քիչ մ'առաջ Նախագահ Սրբազանին հարցնելով տեղեկացաւ որ, Ընդհ. ժողովը վերաքննութեան պայմանն ընդունի թէ ոչ, Քաղ. ժողովն իր պաշտօնը շարունակելու յանձնառու եղած է :

Մի եւ նոյն բանը միայն կը յայտնէ նաեւ Երեսփեան էֆ. իւր արդի բանախօսութեամբ :

Գառնանք բուն խնդրոյն : Նախագահ Սրբազան եւ Քաղ. ժողովն համակամ, համախորհուրդ՝ հարկ տեսեր են չորս անդամք եւս յաւելուլ եւ հետեւապէս անոնց ընտրութիւնը կատարեր են, այն արտօնութեան վրայ կոթ ընելով զոր տուած էր Ընդհ. ժողովը : Այս ընտրութիւնը ժողովոյն հաւանութեան ներկայացեալ է հիմայ եւ ահաւասիկ քուէի կ'ենթարկեմ զայն, ժողովոյ կամքն իմանալու համար :

Ատենապետ էֆ. ըուէի կը դնէ Քաղ. ժողովոյ յիշեալ չորս նոր անդամոց ընտրութիւնն եւ ժողովն ընդհանուր հաւանութեամբ կ'ընդունի :

Ատենապետ էֆ. կ'անցնի կրօն. ժողովոյ ընտրութեան խնդրոյն :

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՐՕՆ. ԺՈՂՈՎՈՅ

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Նախորդ նիստին մէջ կրօն. ժողովոյ նկատմամբ պէտք եղած բացատրութիւնները տուի եւ հետեւապէս առաջարկեցի ժողովոյն թէ՛ ի՛նչ պայմաններով որ Քաղ. ժողովոյ ընտրութիւնն ինձ թողուց վստահութեամբ, մի եւ նոյն վստահութեամբ եւ պայմանով ինձ յանձնէ նաեւ կրօնականին կազմութեան գործը : Երեսփոխան էֆ. ներէն մին՝ կրօն. ժողովոյ ընտրութեան գործին մէջ Եկեղեցական Համագումար ժողովոյ ընտրելեաց ցանկ մը պատրաստելու իրաւունքը յիշեց եւ այդ իրաւանց պահպանութեան նախանձախըն-



զիր կանգնեցաւ : Եւ սակայն ետնապատակ չու-  
նէի բնաւ առանց Համագումար ժողովոյ այդ  
ընտրութիւնը կատարել : այլ կը մտածէի օրի-  
նապէս գումարել զայն , ընտրելեաց ցանկը  
պատրաստել տալ , ստանալ եւ անոնց մէջէն  
վեց կամ եօթ եկեղեցական ընտրելով կրօն . ժո-  
ղովը կազմել եւ ընտրութեան արդիւնքն ընդհ-  
ժողովոյ հաւանութեան ներկայացնել :

Ահաւասիկ այս է իմ առաջարկութիւնս կրօն . ժո-  
ղովոյ մասին , զոր ընդհ . ժողովոյ ուշագ-  
բութեան կը ներկայացնեմ եւ կը յայտնեմ թէ՛  
ինչ որ որոշէ , զայն գործադրելու պատրաստ  
եմ եւ յօժար :

Տ. ՄԱՏԹԷՈՍ ՎՐԴ . — Ինչպէս Նախագահ Սըր-  
բաղանն ըստ , անցեալ նիստին մէջ՝ կրօն . ժո-  
ղովոյ ընտրութեան խնդրոյն առթիւ Սահմանադ-  
րութեան 25ր . յօդուածոյ համաձայն՝ Համա-  
գումար ժողովոյն ընտրելեաց ցանկ պատրաս-  
տելու իրաւունքը մէջ՝ բերուեցաւ : Ես ալ կը  
զիտեմ որ մինչեւ ցարդ կրօնական Համագու-  
մար ժողովը մայրաքաղաքիս եկեղեցեաց քա-  
րօղիչներէ եւ աւագ քահանաներէ միայն կը  
բաղկանայ եւ կ'առաջարկեմ որ այսուհետեւ  
կոստանդնուպօլսոյ մէջ գտնուող բոլոր բնիկ  
եւ գաւառացի եկեղեցականներով կազմուի Հա-  
մագումար ժողովը :

Տ. ՂԵՒՈՒՆՆՆՐ ՎՐԴ . — Ես ալ կը ձայնակցիմ Տ .  
Մատթէոս Աւարդապետի առաջարկութեան :  
կրօն . ժողովոյ ընտրելեաց ցանկ պատրաստե-  
լու համար Սրբազան Պատրիարք Հօր հրաւիրա-  
նօք Համագումար ժողով կը կազմեն 'ի Պօլիս  
գտնուող Եպիսկոպոսները , քարոզիչ Աւարդապետ-  
ներն ու աւագ եւ թոռակալ ֆահանաները :  
Համագումար ժողովոյ կազմութեան այս ձեւը  
զրկանք մ'է գաւառացի եկեղեցականաց , ուս-  
տի ես ալ կ'առաջարկեմ որ այս տեսակ պա-  
րագայի մէջ երբ Համագումար ժողով կազմուի ,  
ինչպէս 'ի Պօլիս պանդխտող գաւառացի Եպիսկո-  
պոսները , նոյնպէս Աւարդապետ եւ Քահանաներն  
իսկ հրաւիրուին յայն , իրենց ընտրական իրա-  
ւունքն 'ի գործ դնելու , որով այն մեծ զրկողու-  
թիւնը վերջ կ'առնու :

ՊԱՆՈՒՆԱՍԵԱՆ Պ . ԷՑ . — կրօն . ժողովոյ վրայ  
զիտողութիւնս եղաւ թէ՛ ոչ նիստ ունի , ոչ  
համար եւ ոչ ալ իւր էութիւնը յայտնի է :  
Այդ ժողովոյ անդամոց պատահեցայ զիպուա-  
ծով , ըսին թէ՛ կրօն . ժողովն ոչ հրաւիրողի  
ընդունած եւ ոչ կոչուած է իւր պաշտօնը շա-  
րունակելու , ինչպէ՞ս ուրեմն կրնար ժողովը

գումարուիլ : կը հարցնեմ թէ ստո՞յգ է այս ար-  
դեօք :

ՆԱԽԱԳԱՋ ՍՐԲԱԶԱՆ . — Երբ կրօն . եւ Քաղ-  
ժողովները կ'ընտրուին , բոլոր անդամները  
միանգամ յատուկ հրաւիրողի կ'ընդունին , ի-  
րենց ընտրութեան կը տեղեկանան , ժողով կը  
կազմեն եւ իրենց սովորական նիստի օրերն  
որոշելով ալ այնուհետեւ անհրաւէր կը շա-  
րունակեն իրենց պաշտօնը : Այսպէս թէ կրօն .  
եւ թէ Քաղ . ժողովները հրաւէր ընդունած են .  
Քաղ . ժողովը շարունակած է իւր պաշտօնը ,  
իսկ կրօնականը՝ ոչ :

ԱՂԱՔԷԿԵԱՆ Մ . ԷՑ . — Իմ խօսքս՝ զոր նա-  
խորդ նիստին ուղած էի՝ մի փոքր երկար պի-  
տի լինի . կրօն . ժողովն իմ սրտի վերայ շատ  
ծանր նստած է . պէտք է իրրեւ Հայ խօսիմ  
այդ մասին եւ ազատիմ այն ծանր բեռնն .  
վասն զի՝ ինչպէս երկու երեսիոխանք առա-  
ջարկեցին՝ պէտք է նախ եւ յառաջ վերաքննել  
Սահմանադրութեան անգործադրելի այն մասերն  
որք մեր դէմը կ'ենեռն եւ Ազգը՝ Սահմանադրու-  
թեան տեսարկով սահմանադրական չեմ ճան-  
չեր , այլ իւր արարքներովը , այլ իւր պատմու-  
թեամբը . . . :

Ատենապետ էՖ . ընդմիջելով ատենաբանը կը  
հարցնէ թէ՛ կրօն . ժողովոյ ընտրութեան եղա-  
նակի՞ն վրայ է իւր խօսքը :

ՆԱԽԱԳԱՋ ՍՐԲԱԶԱՆ . — Գիտեմ , Ազաբէկ-  
եան էՖ . կրօն . ժողովոյ պաշտօնատարու-  
թեան եղանակին վրայ պիտի խօսի . ես ալ այդ  
մասին խօսելիք ունիմ , բայց պէտք է հիմայ  
ընտրութեան որոշումը տալ եւ այնուհետեւ  
միւս կէտին վրայ խնդիր յարուցանել :

ԱՂԱՔԷԿԵԱՆ Մ . ԷՑ . — Ներեցէ՛ք , Սրբազան  
Հայր . . . :

ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ Օ . ԷՑ . — Թերեւս Ազաբէկեան  
էՖ . ընտրութեան սկզբունքը պիտի ջրէ , մինչ-  
դեռ մենք ընտրութեան վրայ խօսելու ելած  
ենք , որով անպատրաստ պիտի գտնուինք այս  
նորոգ յարուցեալ խնդրոյն առջև : Արդէն ատ-  
եանը գոցուելու ժամն ալ հասած է եւ այսքան  
սուղ միջոցի մէջ այսպիսի փափուկ խնդրոյ մը  
վրայ , որ կ'արժէ նկատողութեան առնուլ ,  
կարելի չէ գոհացուցիչ կերպով լուսաւորիլ .  
ուստի ես կ'ազաջեմ որ յաջորդ նիստին մնայ  
խնդիրը :

ՆԱԽԱԳԱՋ ՍՐԲԱԶԱՆ . — Կարծեմ խօսքս չը

կրցի հասկցնել . Ազաբէկեան էՖ . պիտի փաս-  
տաբանէ թէ՛ կրօն . ժողովը Քաղաքականին հետ  
ինչպէս միութեամբ կապուած է . ես ալ պիտի  
փաստաբանեմ երբ այդ խնդիրն յուղելու կար-  
ողը գայ : Սակայն հիմայ պէտք է որ ընտրու-  
թեան խնդիրն որոշուի : Բնաւին կրօնական  
հանգամանք չը կրող խնդիրները բացարձակա-  
պէս Քաղ . ժողովոյ իրաւասութեան ենթակայ  
կ'ըլլան եւ զուտ կրօնական խնդիրներն ալ՝  
կրօն . ժողովոյ . այսպիսի պարագայից մէջ զատ  
զատ պէտք է գործեն այն ժողովներն , իսկ երբ  
միանգամայն կրօնական եւ քաղաքական հան-  
գամանք խնդիրներ երեւան գան , հարկ կ'ըլ-  
լայ այն երկու ժողովներուն՝ միաբանորէն գոր-  
ծել այնպիսի խնդրոց մէջ :

ԱՂԱՔԷԿԵԱՆ Մ . ԷՑ . — Ես իմ գրութեանս  
վրայ պիտի պատմաբանեմ եւ չէ թէ փաստա-  
բանեմ : Այս գրութեամբ Քաղ . ժողով ալ չեմ  
ընդունիր :

( Գալէ յը յայտեր . — Թ . Է Ե . Է , Է . Է Ե . Է )

ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ Օ . ԷՑ . — Յաջորդ նիստին  
պէտք է խօսի :

Ամենուստ ազմուկ մը կը բարձրանայ եւ ա-  
տենական բարեկարգութիւնը պահ մը կը խան-  
գարի : Խառնաշփոթ խօսքեր լսելի կը լինին .  
ոմանք կրօն . ժողովոյ ընտրութեան խնդիրն  
անմիջապէս լուծել կը պնդեն . այլք՝ յաջորդ  
նիստին թողուլ կ'ուզեն :

Ատենապետ էՖ . արձանագրութիւնը դադ-  
րեցնել կուտայ :

Ատենապետ էՖ . կանոնապահութեան հրաւէր  
կը կարգայ եւ բարեկարգութիւնը կը վերա-  
հաստատէ :

ԱՂԱՔԷԿԵԱՆ Մ . ԷՑ . — Եթէ խօսք ալ տըր-  
ուի ինձ՝ այսուհետեւ չեմ կարող խօսիլ , զի  
ժամանակը չը ներեր :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ . — Ընտրութեան խնդրոյն առ-  
թիւ առաջարկութիւն մ'երեւան եկաւ Տ .  
Մատթէոս եւ Տ . Ղեւոնդ Աւարդապետաց կողմէ ,  
Մարկոս էՖ . ալ պատմական տեղեկութիւններ  
ուզեց տալ այն մասին : Արդէն օրը տարածա-  
մած է եւ կարելի չէ այս կարճ միջոցին մէջ  
յարուցեալ նոր խնդրոց վրայ խօսիլ , ուստի  
յաջորդ նիստին կը մնայ խնդիրը բնականաբար :

Ժողովոյ հաւանութեամբ յաջորդ նիստի կը  
թողուի կրօն . ժողովոյ ընտրութեան խնդիրն ,  
առաջին խօսքը Մ . Ազաբէկեան էՖ . ի տալու  
պայմանաւ :

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՔ ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ . Ի

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ . — Երեք զանազան կէտե-  
րու նկատմամբ խօսելիք ունիմ . ուստի կ'ա-  
զաջեմ ժողովն որ մի քանի վայրկեան ուշադ-  
րութիւն չնորհէ ինձ :

Քաղ . ժողովոյ վերահաստատութեան խնդիրն  
յուղուած միջոցին՝ խօսք առնուլ ուզեցի , այլ  
սակայն՝ նոր լանդամոց ընտրութիւնը քուէի  
դնելու համար ժողովոյ ստիպման առջև՝ հրա-  
ժարիլ հարկ եղաւ ինձ խօսելէ . նմանապէս եւ  
կրօն . ժողովոյ ընտրութեան խնդրոյն առթիւ  
խօսելէ արդիւուեցայ՝ յարուցեալ ազմուկ եւ  
աղաղակէն : Երկու անգամուս ալ վիճարանու-  
թեանց ընթացքին մէջ շփոթ նկատած էի եւ  
զայն պարզել էր միտքս աւելի՝ քան թէ անձ-  
նական կարծիք մը յայտնել : Ես՝ իբր Ատենա-  
պետ պիտի պէտք ունէի մանաւանդ այն շփոթը  
պարզելու եւ ժողովոյ որոշումները ճշդիւ գա-  
ղափարելու , որպէս զի զիտնամ խմբազրելի  
ատենադրութեան մէջ իրողութեանց ճշգրութիւ-  
նը պահել :

Հետեւապէս նախ կ'ուզեմ նոյն երկու խնդ-  
րոց վրայ ժողովոյ որոշումնքն ըստ իմ ըմբաման  
ամփոփ քաջատրելու եւ ստուգելու :

Այնպէս հասկցած եմ թէ ընդհ . ժողովը՝ Քաղ .  
ժողովոյ 'ի մասին վերաքննութեան բրած ա-  
ռաջարկութիւնն՝ իբր պայման չընդունեց , այլ  
իբր պարզ դիտողութիւն մը , եւ հետեւապէս  
Քաղ . ժողովոյ չորս անգամոց ընտրութիւնը վա-  
ւերացուց անսպանի :

կրօն . ժողովոյ ընտրութեան խնդիրն ալ յա-  
ռաջիկայ նիստին թողուց , Մարկոս էՖ . ի տա-  
լիք պատմական տեղեկութիւնները լսելու հա-  
մար . վասն զի Մարկոս էՖ . մանաւանդ՝ թէ  
նախընթաց եւ թէ վերջընթեր նիստերէն խօսք  
ուղած էր նոյն խնդրոյն վրայ :

Ես այսպէս զաղափարած եմ այն երկու խնդ-  
րոց էլքն եւ ատենադրութեան մէջ վիճարա-  
նութեանց ընթացքն այս նպատակին յանգած  
պիտի տեսնէք :

Երկրորդ . կը մնայ Գիւանին վրայ Մաղլըմնան  
էՖ . ի մէկ գիւրը , որ ԽԹ . նիստի ատենադրու-  
թեան վրայ փոքրիկ զիտողութիւն մը կը պա-  
րունակէ , ինչպէս 'ի սկզբան սոյն նիստին բե-  
րանացի ալ յայտնել ուզեց Մաղլըմնան էՖ . այլ  
ըստ որում ԽԹ . նիստի ատենադրութիւնն ար-  
դէն վաւերացեալ՝ զիտողութիւնը զիտողու-  
թեան ենթակայ եղաւ եւ անոր ընդունուիլը

կամ մերժուիլն անորոշ մնաց : Ես կ'առաջարկեմ որ իբր չեղեալ համարուի այն դիտողութիւնն եւ Ատենական Կանոնագրին հաստատութեամբ ինքնին լուծուի ինչպիսիք : Եթէ Ատենական Կանոնագրութիւնը թայլ տայ երեսփոխանաց՝ ընդունուած հրատարակեալ ատենագրութեանց վրայ դիտողութիւն ընելու՝ ի վերջէ, յայնժամ Մալլընիան էֆ. իր դիտողութիւնը կրնայ նորոգել :

Երրորդ. օրուան կարգին մէջ խնդիր մը կայ, Բացի այդ էրէ-ֆրանսէզ քննարկութիւններն ընդունելէ պէտք չունի : Եւ անուն, որ խնդրոց կարգը ծանրաբեռնած է միայն, առանց իբր զատ ինչպիսիք ներկայանալու կարեւորութեան. բայց իս Ատենական Կանոնագրին մի մասն է այն խնդիրը եւ անոր քննութեան մէջ յուղելի : Ուստի կ'առաջարկեմ խնդրոց կարգէն վերջընել զայն եւ ժողովոյ հաւանութիւնը կը խնդրեմ այս մասին, եթէ ժողովը ալ նոյն խնդիրն Ատենական Կանոնագրին մէջ իմանալի կը կարծէ :

ԻՆՏԻՆՏԵԱՆ Կ. ԷՖ. — Այս առաջարկութիւնը կ'երկրորդեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կ'երրորդեմ եւ ես :

Քաղ. եւ Կրօն. ժողովոյ խնդրոց նկատմամբ Ատենագրի էֆ. ի ըմբռնումը ժողովը կը հաստատէ եւ ըրած երկու առաջարկութեանց կը հաւանի ու կ'ընդունի զանոնք :

ԱՏԵՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Այս միջոցին Խօծասարեան էֆ. Ատենական Կանոնագրութեան վրայ առաջարկութիւն մը կ'ընէ ժողովոյն հետեւեալ կերպիւ :

ԽօձԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Սկիզբէն ի վեր Ատենական Կանոնագրութեան խնդիր մը կայ օրուան կարգին մէջ, որ դեռ եւս իւր լուծումըն եւ որոշումն ընդունած չէ : Այն սկզբունքով թէ՛ անկանոն ընթանալէն աւելի աղէկ է թերի կանոնով մը քայլել, կ'առաջարկեմ որ ժողովն ընդունի ամբողջապէս Ատենական Կանոնագրին ծրագիրը, գործադրութեան մէջ զընէ եւ երբ անգործադրելի կէտ մը կամ թերի մը նշմարէ անոր որ եւ է տրամադրութեան մէջ զայն փոփոխէ եւ սրբազրէ, վերաքննութեան այն իրաւունքով զոր նոյն կանոնագիրը տրամադրած է արդէն :

ԱԼԱՃԱՃԵԱՆ Զ. ԷՖ. — Ես կ'առաջարկեմ որ ժողովն այդ կանոնագիրը յօդուած առ յօդուած քննութեան առնու եւ այնուհետեւ վաւերացնէ :

ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ. — Կը բողոքեմ Օդսէն էֆ. ի առաջարկութեան դէմ. վասն զի Ատենագրութեան էֆ. ի Ատենական Կանոնագրի խնդիրը յառաջիկայ նիստին թողելու համար՝ պահ մ'առաջ ըրած յայտարարութեան վրայ շատ երեսփոխան-

ներ մեկնեցան արդէն եւ այսպէս տարածամ կերպով նոր խնդիր մը յանկարծուստ որոշման ենթարկել անկանոն է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Նրկու առաջարկութիւն կայ Ատենական Կանոնագրութեան մասին. Խօծասարեան էֆ. կ'ըսէ թէ՛ թերի կանոն մ'առնեալ՝ անկանոն քայլելէն աղէկ է, եւ կ'առաջարկէ որ ժողովը ներկայացեալ ծրագիրն ընդունի առանց դիտողութեան եւ գործադրութեան ատեն երբ թերութիւն մը կամ դժուարութիւն տեսնէ անոր մէջ, այն կէտը սրբազրէ : Իսկ Ալաճաճեան էֆ. կ'առաջարկէ յօդուած առ յօդուած զայն ի քննին առնու եւ այնուհետեւ վաւերացնել :

Եթէ ժողովը կ'ուզէ, այս երկու առաջարկութիւնները քուէի կը դնեմ :

(Շարժ յայնչէր. — Այո՛ + քուէ՛ քրէ՛+)

Բարձրագոյ ձայնիւ բողոք կը բառնան Պէկեան եւ Ալաճաճեան էֆ. ներք պնդելով որ Խօծասարեան էֆ. ի առաջարկութիւնը քուէի չը դրուի : Ազմուկը կը տարածի ժողովոյն մէջ ատենական բարեկարգութիւնը վրդովելով : Ազմուկը հանգարտեցնելու համար Ատենագրութեան էֆ. ի կրկին եւ կրկին ազդարարութեանց եւ ի կարգ հրաւիրելուն հակառակ՝ Պէկեան էֆ. անդու անդադար կը բողոքէ եւ ուր ուրեմն այս բռնութեան ատենին մէջ գործ չ'ունիմ ըսելով դէպ ի ժողովարանին դուռը կ'ուզուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Առ Պէկեան էֆ. ուղղելով խօսքը) Ձեր բողոքները միշտ լսելի կ'ըլլան, երբ օրինաւոր ըլլան եւ ատենը չը խանգարելու եղանակաւ յառաջ բերէք. ձեր բողոքը պիտի արձանագրուի, իսկ այսպէս զոռում եւ գողութեամբ ատենն աղմկելէ յետոյ՝ կը ձգեմ դուրս կ'եղնեմ ըսելնիդ՝ թերեւս չ'որհ մ'ըլլայ ժողովին համար քան սպառնալիք :

ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ. — (Նստելով) Այո՛, կը փափաքեմ եւ կը խնդրեմ որ բողոքս արձանագրուի. ես ձայն բարձրացուցի ոչ թէ ազմուկ յարուցանելու, այլ Ատենագրութեան էֆ. ի Կանոնագրութեան խնդիրը տարածամ կերպով ժողովոյ որոշմանը ներկայացնելուն դէմ՝ բողոքելու համար :

Հուսկ ուրեմն ատենը գոցելու ժամն անցած ըլլալով՝ Ատենագրութեան էֆ. խնդիրը գոցուած եւ յաջորդ նիստին թողուած կը հրատարակէ :

Ատենագրի էֆ. կը ծանուցանէ թէ՛ երեք յաջորդական բացակայութիւն ունեցած է, Յակոբ էֆ. Թողաթլեան :

Ժողովն ինքնին հրաժարեալ կը հրատարակէ, բայց օրինի, յիշեալ երեսփոխանը :

Ատենը կը գոցուի ժամ 10 1/2 ին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԱՏԵՆԱԳՊԻՐ Ս. ԱՂԱՔԷԿԵԱՆ Յ. Զ. ՄԷՐԵՒՄ-ԳՈՒԼԻ

ԳԻՆ 3 ՂՐՈՒՇ

---

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՄՆՏՈՒԿԻՆ

---

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի, և կը գտնուի  
Եկեղեցեաց բանկալները :